23-29 ՀՈՒՆՎԱՐ 2026 ՈՒՐԲԱԹ 001(5870)

# Ազգ

Azg

ISSN: 1829-1651

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

## Սուրբ Պյոլթենը եպիսկոպոսաց ժողովի այլընտրանքային վայր

Ավստրիական kathpress կաթոլիկական լրատուն հունվարի 20-ին ծանուցեց, թե «Հայ եկեղեցին փետրվարի կեսերին եպիսկոպոսների ժողով կանցկացնի Սանկտ(սուրբ) Պյոլթենում: Ակնկալվում է, որ աշխարհի տարբեր ծայրերից ավելի քան 50 եպիսկոպոս կմասնակցի կայանալիք հանդիպմանը՝ Եկեղեցու եւ ՀՀ կառավարության միջեւ առկա հակամարտությունից դուրս ելք գտնելու համար»: Լրատուն գրում է, որ Գարեգին Բ կաթողիկոսի նախագահությամբ աշխարհի տարբեր ծայրերից մոտ 55 եպիսկոպոս կհանդիպեն Սուրբ Պյոլթենում: Հյուրընկալող եպիսկոպոս Ալոիս Շվարցը եւ Գարեգին Բ-ն ուսանողական ընկերներ են, Սուրբ Պյոլթենի եպիսկոպոսը լավ հարաբերություններ ունի նաեւ Վիեննայի ներկայիս եպիսկոպոս Տիրան Պետրոսյանի հետ, որ ղեկավարում է եպիսկոպոսաց ժողովի կազմակերպումը: Ժողովը գումարվում է ի պատասխան ՀՀ-ում վերջերս ծավալվող դրամատիկ զարգացումների. Եկեղեցու ղեկավարության եւ ներկայիս կառավարության միջեւ հակամարտությունը սրվել է:

⇨6

ՕՐԵՐԻ ՀԵՏ

## Ընկեր Փանջունին... ի Հայաստան

Կարծում եմ ճիշտ ժամանակն է նորից հրատարակելու Երվանդ Օտյանի գլուխգործոցը՝ «Ընկեր Փանջունին» իր երեք մասերով՝ «Ի Ծապլվար», «Ի Վասպուրական» եւ «Ի Տիասպորա»: Հակառակ որ այն հրատարակություններ շատ է ունեցել՝ Կահիրե, Փարիզ, Բեյրութ ու Երեւան, սակայն այսօր դժվարությամբ է ճարվում: Նախընտրելի է այն վերահրատարակել, ավելի մեծ ֆորմատով, մեր սիրելի Լեւոն Հախվերդյանի 1989-ին խմբագրած տարբերակով՝ Սարուխանի երգիծանկարներով, որոնք ոչ թե գեղազարդումն են այդ գրքի, այլ՝ ամբողջացումը նրա: Մեծատաղանդ երկու ստեղծագործողներ, մեկը՝ գրող, մյուսը՝ երգիծանկարիչ, կարծես նույն երկը միասին են երկնել, մեկը՝ տառերով, մյուսը՝ գծերով, երկուսն էլ՝ սրատես, սրախոս ու սրամիտ: Ոչ թե ծաղրում ու զվարճացնում են նրանք մեզ, այլ՝ բնութագրում են հավաքական այդ կերպարը, զգուշացնում են նրա ու նմանների գոյության կործանարար հետեւանքների մասին:

Իսկ ովքե՞ր են դրանք՝ փանջունիները: Ծնյալ հեղափոխականներ՝ որոնց ո՛չ թե կյանքն է դարձնում հեղափոխական, այլ իրե՛նք են կյանքը վերածում հեղափոխության: Եսակենտրոն, անհանդուրժող, արկածախնդիր արարածներ, որոնք խռովություն են սերմանում ամեն բանում, անձնական հարաբերությունների մեջ եւ հասարակական կյանքում: Կոնֆլիկտներ ստեղծելը նրանց տարերքն է. հենց դրա համար էլ մարդկանց բաժանում են դասակարգերի, տեսակների, յուրայինների եւ հակառակորդների, կռվում եւ կռվեցնում իրար դեմ, ապա մեղքը գցում ուրիշների վրա: Նրանք դեմ են օրենքներին, չեն սիրում կարգուկանոնը, ավանդույթները, ատում են գոյություն ունեցող կառույցները, որքան կայացած ու հին՝ այդքան զզվում են դրանցից:

Օտյանի Փանջունին իր ոխերիմ թշնամին է համարում գյուղապետին՝ ռեսին, որը չի հանդուրժում խռովություններ իր գյուղում: Նա գյուղապետին համարում է տգետ եւ պահպանողական, իսկ գյուղի քահանային՝ խավարամիտ եւ անբարոյական, եկեղեցու գանձանակը սեփական գրպանը դատարկող խաբեբա, որի միրուքն է պոկում, իսկ նրա խեղճուկրակ ժամկոչին անարգում որպես գյուղացիների «արյունը ծծող կապիտալիստների լակեյ»:

Հապա տեսնենք ինչպիսի՞ն է եղել Փանջունին թերահաս, մանկական տարիքում: Օտյանը նկարագրում է առանձին ուշադրությամբ: Մանուկ Փանջունին նստած՝ իր նոր ստացած խաղալիքն է քանդում: «Ծօ, այդ ի՞նչ կընես», հարց են տալիս մարդիկ: Անվրդով պատասխանում է՝ «Կը շինեմ կոր»: Արեւմտահայերեն՝ «շինելը» չունի արեւելահայերեն փոխաբերական ներկա իմաստը: Իսկ արեւելահայերեն՝ Փանջունին շինում է, շինում է երկիրը, պետությունը, ազգը, եկեղեցին, բոլորիս: Շինում է եւ շինվում, Կալլասից, Ուրսուլայից, Թրամփից, անգամ՝ կնիկից ամեն օր ծեծ ուտող Մակրոնից, Իլհամից, Էրդողանից, Թրամփից ու մյուսներից: Շինվում է ու հանձնում, հանձնվում է ու դարձյալ շինվում՝ այս բայի բոլոր իմաստներով: Նրանք իրեն չեն խանգարում, չեն քննադատում, ընդհակառակն՝ քաջալերում են շինարարության ընթացքը, որը հոգուտ իրենց է նաեւ: Մանավանդ որ, նա ոչինչ չի պահանջում նրանցից, այլ ընդամենը՝ սեփական ժողովրդին զեկուցում կամ հրահանգ է տալիս՝ «Մի քիչ փող ուղարկեք»: Եվ ուղարկում են, առատաձեռնորեն, նույնիսկ սեփական բերանից կտրելով: Քանզի գիտեն, սիրելի Փանջունին է սովորեցրել, որ քաղցը կապ չունի ստամոքսի հետ, այլ՝ սեփական ուղեղի հետ: Ինչպես որ պարտությունը կապ չունի Եռաբլրում ննջող երիտասարդների հետ, այլ՝ սեփական գիտակցության, հոգեկան զգացողության հետ: Որ Շուշիի, ողջ Արցախի հանձնումը կապ չունի գերագույն գլխավոր հրամանատարի հետ, այլ՝ դասալիք, դավաճան գեներալների, գնդապետների, նույնիսկ՝ Արցախի ռազմաքաղաքական ղեկավարների հետ, որոնք, ինչպես մեղադրում են փանջունիականները, չկռվեցին, չդիմադրեցին, չզոհվեցին ռազմի դաշտում եւ նախընտրեցին հյուրընկալվել Ալիեւի բանտախցերում: Թող այդպես էլ մնան այդտեղ, դրանց տե՛ղն է…

***

Այո, Փանջունին, ինչպես փանջունիականությունը, անմահ է, 19-րդ դարի երկրորդ կեսին, 20-րդի սկզբում, կեսերին եւ հիմա՝ 21-րդ դարում, ի Հայաստան:

Պարզապես նրան պետք է լավ ճանաչել: Պետք է վերահրատարակել Օտյանի գլուխգործոցը, մի քանի լեզուներով, ու տարածել հատկապես երիտասարդության մեջ՝ «Եթե իրազեկ ես, ուրեմն ապահով ես» սկզբունքով: Մեզ պետք է ապահով Հայաստան:

ՀԱԿՈԲ ԱՎԵՏԻՔՅԱՆ

## Գնացքի հետեւից

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ




Ներկա խորհրդարանի այս շաբաթ սկսված վերջին նստաշրջանում նույն այն տրամադրություններն էին, որոնք կային Հայաստանի ներքին կյանքում նախորդած ամիսներին, իսկ հիմա էլ նախընտրական տրամաբանության ներքո են ու քաղաքական մրցակցության համատեքստում: Բնականաբար՝ բոլոր հարցադրումների (ԹՐԻՓՓ), Եկեղեցու շուրջ գործընթացներ, առողջության ապահովագրության մեկնարկած գործընթաց, բացվածքն այդ մրցակցության ծիրում էր:

Ու չնայած ինձ թվում էր, թե Իրանի շուրջ տեղի ունեցողը գոնե անվտանգային առումով պետք է անհանգստացներ մեր խորհրդարանականներին՝ Հայաստանի համար հղի բազմաթիվ մարտահրավերներ պարունակելով, բայց հավանաբար ես անուղղելի լավատես եմ մեր քաղաքականների մասով, այնուամենայնիվ՝ նրանց առավել հետաքրքրում էր մրցակցին ոչնչացնելու սեւեռուն գաղափարը:

Երբ ես իշխանական խորհրդարանականներ **Ռուբեն Ռուբինյանից, Վահագն Ալեքսանյանից, Արմեն Խաչատրյանից**, ընդդիմադիր **Արմեն Ռուստամյանից** հետաքրքրվում էի, թե Իրանի հետ կապված վատագույն սցենարի դեպքում Հայաստանի համար վտանգներին մենք պատրա՞ստ ենք, ի պատասխան նրանք բոլորն էլ լավատես էին, թե Իրանի հետ կապված վատագույն սցենար չի գործարկվի: Համենայնդեպս՝այդպիսի հույս ունեին: Իսկ այդ սցենարի դեպքում, գիտեք, Հայաստան կարող են լցվել հազարավոր փախստականներ, նրանց հետ ամեն տեսակի կասկածելի մարդիկ, գումարած ուղիղ սահմանային լարվածությունը, քանի որ մեր շուրջ եղած պետությունների՝ մեր գլխի վրայով զինական միջամտությունը բացառել չենք կարող, մեզ համար ռեալ վտանգավոր իրավիճակի ստեղծումով:

Մերոնք, ինչպես միշտ, իրենց ամպլուայի մեջ են՝ ներքաղաքական տուրեւառով են զբաղված, ճիշտ այնպես, ինչպես 2020 թվականի պատերազմից օրեր առաջ: Ու չգտնվեց մեկը, որ Իրանի հետ կապված վիճակի մասին հարց ուղղի պատասխանատու պաշտոնյաներին ԱԺ-կառավարություն հարցուպատասխանի ժամանակ:

⇨3

## ՌԱԿ-ի Համադրուած Մամուլ

## ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

### *Ամենայն Հայոց Կաթողիկոսի հրաւէրով՝ Եպիսկոպոսական ժողով կը գումարուի Աւստրիոյ մէջ, Կեդրոնական Եւրոպայի հայրապետական պատուիրակութեան հիւրընկալութեամբ*

### Ցաւալիօրէն իշխանութիւնները մասնակցողներուն ապահովութեան երաշխիք չեն տուած, որպէսզի ժողովը կարելի ըլլար գումարել Ս. Էջմիածնի մէջ

ՌԱՄԿԱՎԱՐ ԱԶԱՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ՀԱՄԱԴՐՈՒԱԾ ՄԱՄՈՒԼ

Ազգ · Ազդակ · Արեւ · Զարթօնք · Նոր Աշխարհ · Պայքար · The Armenian Mirror-Spectator · Semanario Armenio SARDARABAD ՍԱՐԴԱՐԱՊԱՏ

Նախագահութեամբ՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսին, Հ.Ա.Ե. Գերագոյն Հոգեւոր Խորհուրդը իր վերջին ժողովին ընթացքին ներկայ՝ իշխանութիւն-եկեղեցի լուրջ տագնապի պայմաններուն մէջ անհրաժեշտ նկատած է գումարել Հ.Ա.Ե. Մայր Աթոռի Եպիսկոպոսական ժողով, մանրամասն կերպով քննելու համար ներկայ աննախադէպ տագնապին բոլոր տուեալները եւ որոշումներ կայացնելու համար, մինչեւ հեռձուածային քանդիչ արարքներու տանող վերջին զարգացումներուն ի պատասխան: Նոյնպէս Եպիսկոպոսական Ժողովէն կ՚ակնկալուի քննել եւ որոշում կայացնել Ազգային Եկեղեցական Ժողովի գումարման մասին, որ Հ.Ա.Եկեղեցւոյ կանոնադրութեան համաձայն Գերագոյն հեղինակութիւնն է, որ իրաւասու է եւ պարտի առնել այն որոշումները, որոնք որպէս օրինական վճիռներ պարտին գործադրուիլ Հայաստանի եւ աշխարհատարած Սփիւռքի մէջ գործող Հայաստանեայց Եկեղեցւոյ բոլոր կառոյցներուն կողմէ:

⇨3

ԱՆԱՀԻՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ

Գերմանիա

# Մյունխենի դատարանում Ադրբեջանին էլ դատապարտեցին

## *Աքսել Ֆիշերին՝ մեկ տարի եւ երկու ամիս պայմանական ազատազրկում*

Երեկ առավոտյան Մյունխենի երկրամասային բարձրագույն դատարանը Ադրբեջանից կաշառք ստացած՝ Բունդեսթագի նախկին պատգամավոր, ԵԽԽՎ-ում պաշտոնական Բաքվի հրահանգները կատարող, քրիստոնյա- դեմոկրատական կուսակցության պատգամավոր **Աքսել Է. Ֆիշերին** դատապարտեց մեկ տարի եւ երկու ամիս պայմանական ազատազրկման: Ֆիշերը, որ մինչեւ վերջ պնդում էր, թե «իր ձայնը չի վաճառել», մեղավոր ճանաչվեց, կաշառակերության փաստը ապացուցված համարեց դատարանը: ՔԴՄ նախկին պատգամավորն ավելի քան 30,000 եվրո տուգանք պետք է վճարի նաեւ: Դատարանը ապացուցված է համարել, որ Ֆիշերը, որպես ԵԽԽՎ անդամ, գումար է ստացել Ադրբեջանից՝ երկրի դրական վարկը պահպանելու համար: Մյունխենի երկրամասային բարձրագույն դատարանի երեկ հրապարակած վճռի համաձայն, Ֆիշերին տրված 20,000 եվրո կաշառքը կբռնագրավվի: Բացի այդ, նա պետք է 12,000 եվրո վճարի զոհերի աջակցության բարեգործական հիմնադրամին, (մեղադրող կողմը 80 հազար էր պահանջել) եւ երկու տարի ժամկետով արգելվում է պետական որեւէ պաշտոն զբաղեցնել, ինչպես նաեւ ընտրվել, որեւէ խորհրդարանում պատգամավոր լինել: (Մեղադրող կողմը պահանջել էր երեք տարվա արգելք):



*Լուսանկարը՝ dpa-ի*

Դատարանը հետեւել է մեղադրող կողմի փաստարկներին: Մյունխենի դատախազության հետաքննության համաձայն՝ Ֆիշերը տարիների ընթացքում տասնյակ հազարավոր եվրո է ստացել: Դրա դիմաց դրական ելույթներ է ունեցել Ադրբեջանի մասին, գաղտնի փաստաթղթեր է տրամադրել այդ երկրին: Մեղադրող կողմը պահանջել էր մեկ տարի ութ ամիս պայմանական ազատազրկում: Դատախազությունը նաեւ պահանջել էր 100,000 եվրոն գերազանցող դրամական վճարումներ: Ֆիշերի պաշտպանները ցանկանում էին դատավարությունը ձգձգել՝ սպասում էին վաղեմության ժամկետը լրանալուն: Դատավճռի պատճառաբանության մեջ նախագահող դատավոր **Յոխեն Բյոզլը** նշել է, որ Ֆիշերն առնվազն 2011 թվականի սկզբից ստացել է ընդհանուր առմամբ 79,000 եվրո կանխիկ վճարում: Սակայն, Ադրբեջանից Ֆիշերին փոխանցված այս վճարումները քրեական հանցագործություն են համարվել միայն 2014 թվականի սեպտեմբերից՝ ԳԴՀ նոր օրենսդրության ուժի մեջ մտնելուց հետո: Դրանք հիմք են հանդիսացել կայացված դատավճռի համար: Ֆիշերը կալանքի տակ էր դեկտեմբերի 22-ից ի վեր, քանի որ բազմիցս չէր ներկայացել դատական նիստերին: Նախագահող դատավորը հայտարարել է, որ մեղադրյալին դատավարության ընթացքում կալանքի տակ պահելը խիստ արտասովոր է, սակայն այլ ելք չի եղել: Դատարանը շեշտել է, որ վաղեմության ժամկետը լրանալու էր մարտ ամսին:

Պաշտպանական կողմը եզրափակիչ ելույթներում սուտ եւ անհիմն է որակել մեղադրանքը, շեշտել, որ հետաքննությունը կողմնակալ է եղել, պահանջել է արդարացում: Աքսել Է. Ֆիշերը Մյունխենի երկրամասային բարձրագույն դատարանում արտասանած եզրափակիչ խոսքում հաստատել է, որ ինքը «կաշառակեր չի եղել եւ Ադրբեջանի շահերին ի նպաստ չի գործել»: Մեղադրյալը շեշտել է, որ ինքը «20,000 եվրո կամ նման բան չի ստացել», «զրպարտել են»: Ֆիշերը վերջին չորս շաբաթներն անցկացրել է Մյունխեն-Շտադելհայմ բանտում՝ նախնական կալանքի տակ, քանի որ բազմիցս առանց պատճառաբանության չէր ներկայացել դատական նիստերին: «Transparency International Germany» հակակոռուպցիոն կազմակերպությունը նրան մեղադրել էր դատավարությունը միտումնավոր հետաձգելու համար, որով ակնկալում էր վաղեմության ժամկետը լրանալու պատճառաբանությամբ խուսափել պատժից: «**Ազգի**» 2025-ի համարներում տարբերաբար անդրադարձել ենք մեկ տարի առաջ հունվարին Մյունխենի երկրամասային բարձրագույն դատարանում Ադրբեջանից կաշառառության գործով 4 անձանց դատավարությանը: Հիվանդության պատճառով Ֆիշերի գործն առանձնացվեց մյուսներից, քանի որ այդ պատճառաբանությամբ բացակայում էր նիստերից: Բունդեսթագի նախկին պատգամավոր քրիստոնեա-սոցիալական կուսակցության անդամ **Էդուարդ Լինթներն** 2025-ի ամռանը դատապարտվեց ինն ամսվա պայմանական ազատազրկման: Լինթները վճիռը բողոքարկել է՝ դիմելով Կարլսռուեի դաշնային դատարան:

Մեր կարծիքով, մեղմ պատժի արժանացան Ադրբեջանից կաշառառու գերմանացի քաղաքական գործիչները, այդուհանդերձ մեկ տարի շարունակ Մյունխենի դատարանում դատապարտվում էր Ադրբեջանը, նրա քաղաքական համակարգը, ներկա ղեկավարությունը: Գերմանիայի դատախազությունը հատորներով փաստ է կուտակել, ո՞վ գիտե՝ հարմար պահի միգուցե այլ հանցագործներ, ոճրագործներ էլ կանգնեն դատարանի առաջ: Իսկ ադրբեջանական աղբյուրները դատավարության մասին լռում են, նրանց գերմաներեն լրահոսը հունվարի 16-ից ի վեր ողողված է «Սոքարից» ԳԴՀ եւ Ավստրիա հասնող գազի առաքման փաստով: Գազն ու նավթը մի օր կվերջանա, կամ՝ կխլեն... Ադրբեջանի հերթը դեռ չի եկել:

ԳՐԻԳՈՐ ԱՌԱՔԵԼՅԱՆ

Իրանագետ

# Իրանական անցքերին արձագանքում են հարեւանները

Իրանի ներքաղաքական ցնցումներն իրենց արտացոլանքն են գտել նաեւ հարեւան երկրներում:

Իրանին վերաբերող հայաստանյան արձագանքների մասին մեր հանրությունը տեղեկացավ Երեւանում՝ Իրանի Իսլամական Հանրապետության դեսպանատան դիմաց տեղի ունեցած ակցիաների, դրանց առիթով Երեւանում ԻԻՀ նորանշանակ դեսպան **Խալիլ Շիրղոլամիի** մամուլի ասուլիսի ընթացքում հնչեցրած դժգոհությունների, ինչպես նաեւ ՀՀ իշխանությունների արձագանքների միջոցով:

Ցուցարարները հանդես եկան հակաիրանական կարգախոսներով, ԻԻՀ դեսպանը դժգոհեց, որ ՀՀ կառավարությունը ոչինչ չի ձեռնարկում ցույցերը կանխելու ուղղությամբ, իսկ Հայաստանի իշխանությունները հակադարձեցին, որ երկրում գործում են ժողովրդավարական սկզբունքներ, եւ «թավշյա հեղափոխությունից» հետո ցույցերի անցկացումը որեւէ անգամ չի արգելվել: Միաժամանակ ՀՀ իշխանությունները վստահեցրին, որ Հայաստանը ամեն ինչ անելու է բարեկամական եւ եղբայրական Իրանի բոլոր մտահոգությունները փարատելու համար:

Կարելի է արձանագրել, որ Իրանում ընթացող հակակառավարական ցույցերի վերաբերյալ պաշտոնական Երեւանի գնահատականներն առայժմ բավականին զուսպ են:

Նույն օրերին, երբ Երեւանում Իրանի դեսպանատան դիմաց հավաքված հայաստանաբնակ իրանցիները բողոքի ակցիաներ էին անցկացնում եւ դատապարտում Իրանի իշխանություններին ցուցարարների նկատմամբ բռնություններ կիրառելու համար, Ստամբուլում՝ ԻԻՀ գլխավոր հյուպատոսության մոտ հավաքված բազմությունն իր աջակցությունն ու համերաշխությունն էր հայտնում Իրանի իշխանություններին:

Ըստ Mideast News-ի, Ստամբուլում պրոիրանական պաստառներով հանդես եկող հանրահավաքի մասնակիցները վանկարկումներով դատապարտում էին այլ երկրների՝ Իրանի ներքին գործերին միջամտելու փորձերը, այրում ԱՄՆ-ի ու Իսրայելի դրոշները, ինչպես նաեւ ԱՄՆ նախագահի **Դոնալդ Թրամփի** պատկերները:

Թուրքիան նույնպես սկզբնական շրջանում զսպվածություն էր ցուցաբերում իրանական իրադարձությունների վերաբերյալ հայտարարություններում, սակայն Թեհրանի շուկայում նախորդ տարվա հունվարի 28-ից սկսված բողոքի ցույցերից մոտ երկու շաբաթ անց սկսեց հնչեցնել արդեն պաշտոնական դիրքորոշում արտահայտող հայտարարություններ:

Առաջինը Թուրքիայի իշխող «Արդարություն եւ զարգացում» կուսակցության խոսնակ **Օմեր Չելիքն** էր, որ, ըստ Reuters գործակալության, հունվարի 12-ին հայտարարել է, որ Թուրքիան չի ցանկանում Իրանում քաոսի ականատեսը լինել՝ ընդգծելով, որ այդ երկրի խնդիրները պետք է լուծվեն բացառապես ներքին գործիքակազմերի միջոցով, Իրանի ազգային կամքին համապատասխան:

Մի քանի օր անց, հունվարի 17-ին, Թուրքիայի արտաքին գործերի նախարար **Հաքան Ֆիդանն** էլ հանդես եկավ հայտարարությամբ՝ մտահոգություն հայտնելով, որ բողոքի ցույցերը կարող են տարածաշրջանում ավելի լայնածավալ անկայունության հանգեցնել: Նա ընդգծեց, որ Իրանի ներքին խնդիրների կարգավորումը պետք է վերապահված լինի բացառապես Թեհրանին:

Հատկանշական է, որ Ֆիդանն Իրանի վերաբերյալ իր տեսակետները հնչեցրել է Իրանի արտաքին գործերի նախարարի, տարածաշրջանային այլ գործընկերների, ինչպես նաեւ Անկարայում ԱՄՆ դեսպանի հետ հանդիպումներից հետո:

Երկու օր անց, հունվարի 19-ին, Թուրքիայի նախագահ **Ռեջեփ Թայիփ Էրդողանը** կառավարության նիստի ավարտից հետո ունեցած ելույթում նշեց, որ հարեւան Իրանը, Իսրայելի հարձակման ենթարկվելուց հետո, այսօր կանգնած է երկրի խաղաղությունն ու կայունությունը թիրախավորող նոր մարտահրավերների առջեւ:

«Մենք համոզված ենք, որ Իրանին կհաջողվի հաղթահարել այս՝ ծուղակներով լի ժամանակաշրջանը», ասել է Էրդողանը՝ հավելելով, որ խաղաղության եւ կայունության վրա հիմնված արտաքին քաղաքականությամբ Թուրքիան կշարունակի ընդդիմանալ տարածաշրջանը դեպի անորոշություն տանող բոլոր փորձերին:

Մինչ այս պահը Ադրբեջանում հակաիրանական կամ իրանամետ հանրահավաքների վերաբերյալ տեղեկատվություն չկա: Չի բացառվում, որ Ադրբեջանը, հաշվի առնելով Իրանական Ատրպատականի հետ կապված իր ծավալապաշտական հաշվարկները, շահագրգռված չի եղել Իրանի իշխանություններին քննադատող ցույցերի անցկացման թույլտվություն տրամադրել, ինչը բնորոշ է ավտորիտար Ադրբեջանի քաղաքական գործելակերպին:

Այնուամենայնիվ, չխախտելով զգուշավորության սահմանները, Ադրբեջանի նախագահ **Իլհամ Ալիեւը** Իրանի վերաբերյալ իր մտահոգությունները հնչեցնելու համար ընտրեց Դավոսի համաշխարհային տնտեսական ֆորումի հարթակը: Euronews հեռուստաընկերությանը տված հարցազրույցում նա հունվարի 20-ին նշել է, որ յուրաքանչյուր երկիր, այդ թվում՝ Ադրբեջանը, պետք է մտածի ինչպես իր սահմանների ներսում, այնպես էլ դրանցից դուրս կայունության պահպանման մասին:

Ալիեւը վստահեցրել է, որ Ադրբեջանը ներքին պոտենցիալ ռիսկեր չունի, իսկ հնարավոր վտանգները կարող են ներմուծվել դրսից, ինչի պատճառով էլ կարեւորել է Ադրբեջանի հարեւանությամբ տիրող կայունությունը: Նա հավելել է, որ Ադրբեջանին մտահոգում է Իրանում առկա անկայունությունը՝ ընդգծելով, որ կայունությունը, կանխատեսելիությունն ու տարածաշրջանային խաղաղությունը Ադրբեջանի համար առանցքային նշանակություն ունեցող գործոններ են:

# Գնացքի հետևից

⇨1 Դե հա՝ արտաքին հետախուզական ծառայությունն իր զեկույցում այս տարի Ադրբեջանի կողմից էսկալացիան գրեթե անհավանական է որակել, փափուկ բարձ դնելով մեր թեւերի տակ, մինչդեռ ներքաղաքական լարվածությունն ընտրությունների հետ կապված հնարավոր է համարել, ու այս բոլորը ներկայացրել մեզ ու աշխարհին: Իսկ թե ինչո՞ւ է հնարավոր այդպիսի զեկույցի հրապարակային լինելը՝ այլ երկրների հատուկ ծառայություններին մեր խնդիրների համապատկերը մատուցելով, եւ ինչո՞ւ հնարավոր չեղավ պատերազմի հանգամանքները քննող ԱԺ ժամանակավոր հանձնաժողովի զեկույցի հանրայնացումը՝ թեկուզ պետական գաղտնիք պարունակող մասերը փակելով, ակամա զուգահեռով սա է մնում պետական գաղտնիք:

Պարոնա՛յք, ցույց տվեք մի երկիր, որ իր արտաքին հետախուզության վերաբերյալ զեկույց կամ կողմնորոշիչներ է հրապարակում:

Նույն կերպ երբ ԹՐԻՓՓ-ի շուրջ տուրեւառն էր խորհրդարանում, ոչ ոք ոչ հարց ուղղեց ու ոչ էլ պատասխան ստացավ, թե ինչպես են ձեւավորվել Հայաստանի եւ ԱՄՆ-ի 26% եւ 74% բաժնեմասերը, ո՞ր տնտեսական, իրավական հիմնավորումներով եւ բանակցային ի՞նչ մանրամասներով, այդ հիմնավորումների համար ո՞ր պատասխանատուներով, որոնք համոզեն այդ թվերի անխուսափելիությունը:Մինչդեռ, այ, առանց այդ մանրամասների, ընդդիմությունը համոզված է, որ Հայաստանի ինքնիշխանությունը խոցելի դարձնող ԹՐԻՓՓ-ի համար պատասխանատու իշխանությունն է վատը, ու եթե ազգային իշխանություն ձեւավորվի առաջիկա ընտրություններում, ապա ավելի հավասարակշռված կիրագործվի այդ ծրագիրը:

Մի խոսքով՝ ԹՐԻՓՓ-ը վատ չէ, նրա իրագործողներն են վատը, որ 26 տոկոսանոց ինքնիշխանություն են թողել Հայաստանին ընդամենը (Արմեն Ռուստամյան), որ հայերիս համար Ադրբեջանով համարժեք անցուդարձ չեն կարողացել բանակցել, ու ընտրություններին ընդդիմության բոլոր թեւերը պիտի լայնորեն համագործակցեն, որ իշխանության գան ու ավելի լավ ԹՐԻՓՓ իրագործեն:

Իսկ իշխանությունն էլ իր պատասխաններն ունի՝ԹՐԻՓՓ-ն աննախադեպ հաջողություն է Հայաստանի համար, համարժեք անցուդարձի համար երկաթուղի պիտի վերականգնվի եւ գործարկվի, որն անցած իշխանությունների օրոք թալանվել ու ոչնչացվել է, իսկ ընդդիմադիրներն էլ ողորմելիներ են: **Արարատ Միրզոյանի** այս բնորոշումը հաջորդ օրը վերադարձրեց **Վարդան Օսկանյանը**՝ դրան նախորդած իր բացատրություններին ԹՐԻՓՓ-ի վերաբերյալ հավելելով.«Ինձ զարմացրեց, որ հնարավոր է համեմատություն անցկացնել Հայաստանի ամբողջ լայնքով՝ արեւմտյան սահմանից մինչեւ արեւելյան սահման, 50 տարով երրորդ երկրի լիակատար վերահսկողության տակ տարածք հանձնելու եւ երրորդ կողմին որեւէ պետական կամ ոչ պետական ձեռնարկության կոնցեսիա՝ նույնիսկ սեփականություն տրամադրելու միջեւ: Սրանք համեմատելի բաներ չեն»:

Բայց գնացքն արդեն գնացել է. Թրամփը թեւերը փռում է ԹՐԻՓՓ-ի եւ նրա հանձնառու Հայաստանի վարչապետի վրա, որն, ի դեպ, արդեն Դավոսում ստորագրել է «Խաղաղության խորհրդի» կանոնադրության տակ եւ Հայաստանն այդ խորհրդի անդամ դարձրել, Թրամփն էլ նրան ու Ալիեւին իր ընկերներն է անվանել եւ այլն:

Ատված գիտե, թե դեռ ինչեր են ի հայտ գալու ԹՐԻՓՓ-ի իրագործման ընկերության ստեղծումից հետո, եւ աշխարհն առհասարակ ինչ տեսք է ունենալու ընդամենը մեկ տարի հետո: Եւ առհասարակ, ի՞նչ կարելի է անել ամերիկյան տարածաշրջանային նպատակադրումների հետ, եթե նկատի առնենք Վենեսուելայի, Գրենլանդիայի շուրջ գործընթացներում Թրամփի կոշտությունը, Խաղաղության խորհուրդ ստեղծելու նրա մտադրությամբ ԵՄ կառույցների հետ թաքնված մրցակցության ենթատեքստը եւ այլն:

Ընդհանրապես փոքր պետությունների ողբերգությունն է՝ անվտանգության եւ զարգանալու երաշխավորների միջեւ տարուբերվելը, եւ ինչպես հարյուր տարի առաջ, այնպես էլ այժմ այդ պատճառով մշտական վտանգների ենթարկվելը, որովհետեւ մենք դեռ չգիտենք, թե ով-ում հետ եւ ինչպես է կիսելու աշխարհը վաղը, **Լավրովի**՝ մեր ներքին խնդիրների վերաբերյալ առանց քաշվելու հայտարարությունները վկա:

Մոտեցող ընտրությունների առումով նաեւ կարելի է մեր վերն ասվածը պրոյեկտել, քանի որ նույն բաժանմամբ են նաեւ գործում եւ գործելու մեր քաղաքական միավորները, որոնցից ամեն մեկն իհարկե նայելու է իր նախընտրած մեծ խաղացողի կողմը, այդպիսով մեր ընտրությունները դարձնելով մեր երկրում նրանց բախման արենա:

**Սամվել Կարապետյանի** գրանցած «Ուժեղ Հայաստան» կուսակցությունը, անկախ նրանից, թե ո՞վ է չերեւացող մոդերատորը, կարելի է համարել այդպես էլ չվերբեռնված ընդդիմության կանդիցիայի ենթարկելու փորձ, այդ ենթատեքստում են նաեւ մի քանի փոքրիկ միավորներ՝ անունները չգովազդենք: Չի երեւում դեռ, թե ո՞վ է կանգնած «Բոլորին դեմ ենք» նախաձեռնության հետեւում: Միգուցե **Գագիկ Ծառուկյանն** էլ է ուզում առաջարկ ներկայացնել Հայաստանի (իր մի նախաձեռնության անունով) քաղդաշտին՝ այդ դեպքում էլ ավելի անհասկանալի, թե ում երեսը լվանալով: Եւ անշուշտ, իշխանությունն է նոր, փոքրիկ նախընտրական միավորներ ստեղծում՝ փոշիացնելու համար ընդդիմության ձայները:

Այստեղ ավելի կարեւոր է արձանագրել, որ ընդդիմության հին ձեւաչափերի էջն այս տարիներին այդպես էլ չփակվեց ու չէր էլ կարող փակվել, քանի որ նրա տարբեր թեւերի ներկայացրած շրջանակները հսկայական ֆինանսատնտեսական ռեսուրսների են տիրապետում, իսկ մեր հանրությունը կորցրեց այս անգամ նոր բովանդակության ընդդիմությամբ իշխանությանը հակակշռելու, վարչական ռեսուրսի եւ միջազգային հովանավորության տիրապետող իշխանության համար լուրջ մրցակից դառնալու շանսը: Այդպիսի գործընթացներն, այո, ցավոտ են, իսկ մեր հասարակությունը չի սիրում արմատական եւ ցավոտ մեթոդներ: Բացի այդ՝ ընդդիմադիր տարբեր թեւերն այնքան հակադիր են իրար շահերի եւ մրցակցության առումով, որ անգամ նրանցից յուրաքանչյուրն այդքան հակադիր չէ իշխանությանը, այնպես որ Արմեն Ռուստամյանի ակնկալած լայն համագործակցությունը հազիվ թե ստացվի, եթե չասենք, որ ի սկզբանե անկարելի է:

Նույնիսկ մի օրինակով կարելի է բնութագրել մեր ընդդիմությանը՝ հիշելով մի երկու տարի խաղարկած իմպիչմենտի իմիտիցիան, որ նախ հնարավոր չէր հենց ընդդիմության տարբեր շահերի պատճառով, երկրորդ՝ դա ոչ մեկին ձեռնտու չէր, քանի որ ժամանակից շուտ արձակված խորհրդարանի բոլոր պատգամավորներին հետագայում սպառնում էր ՀՀ մյուս հասարակ քաղաքացիների ճկույթաչափ թոշակը: է, իրենց էլիտա պատկերացնող իշխանական եւ ընդդիմադիր պատգամավորները, թեկուզ հազար հանրային շահ լիներ, իրենք իրենց հո չէի՞ն զրկելու ապահով ապրելու հեռանկարից ինչ-որ հանրային պահանջների պատճառով: Իմպիչմենտի մասին խոսողների իրական մոտիվներն այլ էին: Էլ չասած, որ նրանց որոշ խմբեր, անցյալում էլ, հիմա էլ, թաքուն համագործակցում են իշխանության հետ: Այնպես որ մեր՝ բազմիցս նշած Բերմուդյան եռանկյունի (հիմա արդեն դա կարելի է քառանկյուն անվանել) քաղաքական դաշտն այդպես էլ մնաց տասնամյակներով գործող համակարգի մեջ, այդ համակարգն իր ներքին կառուցվածքն ամուր պահելու համար այս անգամ էլ նպաստելու է իշխանության վերարտադրությանը՝ իր հանդեպ Հայաստանի հանրության մեծ մասի անբարյացակամությունը գեներացնելով ի նպաստ խաղաղությունից խոսող, միջազգայինների հովանավորությունը վայելող եւ տարբեր հանրահաճո քայլեր ձեռնարկող իշխանությունների:

Ես ոչ մի շահ ու պատճառ չունեմ իրականությունը չարձանագրելու, այս կամ այն կողմի քարոզչական խողովակ դառնալու, իմ պարտավորությունը միշտ երկրի շահին ու հանրության լայն շերտերի իրազեկմանը նպաստելն է, որ միշտ արել եմ, եթե սխալվեմ, խոստանում եմ ընտրություններից հետո ներողություն խնդրել:

Իշխանությունն, իհարկե, բազմաթիվ սխալներ է գործել, ու դրանցից ամենաանընդունելին հանրության պառակտմանը նպաստելն է՝ տարբեր պոպուլիստական բացատրություններով: Հանրության կոնսոլիդացումը հենց իշխանության գերխնդիրը պետք է լիներ՝սոցիալական արդարության եւ եկամուտների հավասարակշռված բաշխման հետ, ու ոչ թե միլիոնավոր պարգեւավճարներով հանրության աղքատ շերտերին զայրացնելը: Այնպես որ՝ իշխանությունը եւս ընտրություններին խնդիրներ է ունենալու:

Անձամբ ես նախընտրական այս քանի ամիսներին մի սպասում ունեմ հանրությունից՝ նրա գիտակից շերտերի գեներացումն ապագայի համար:

# ՌԱԿ-ի Համադրուած Մամուլ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

⇨1 Փետրուար 16-էն 19-ին գումարուելիք այս կարեւոր ժողովը, որ բնականոն պայմաններու մէջ պէտք է գումարուէր Մայր Աթոռ Ս. Էջմիածնի մէջ, ցաւալիօրէն, Գերագոյն Հոգեւոր Խորհուրդը պարտաւոր զգացած է Հայաստանի մէջ տիրող քաղաքական ակնյայտ անապահովութեան հետեւանքով գումարել Հայաստանէն դուրս: Արդարեւ, անցնող ամիսներուն ընթացքին իշխանութեանց կողմէ գործադրուած հոգեւորականներու եւ կարգ մը աշխարհականներու անօրինական կալանաւորումներու՝ Հայ ժողովուրդի պատմութեան մէջ աննախադէպ ցաւալի երեւոյթը, բնականօրէն ստեղծած է անապահովութեան մթնոլորտ մը, որուն իբրեւ հետեւանք՝ այս համաշխարհային բնոյթ ունեցող Եպիսկոպոսական Ժողովին ակնկալուած մասնակցողներուն համար անկարելի կը դարձնէ նախաձեռնել դէպի Հայաստան ճամբորդութիւն մը, առանց ինքզինք ենթարկելու անօրինաբար կալանաւորուելու հաւանականութեան: Ահա այս իսկ պատճառով է, որ որոշուած է Եպիսկոպոսական Ժողովը գումարել Աւստրիոյ Սանթ Փյոլթըն քաղաքին մէջ:

Խիստ ցաւալի է այս վերջին պարագան, որուն պատասխանատուութիւնը ամբողջովին կը կրէ Հայաստանի ներկայ իշխանութիւնը: Արդարեւ, յատուկ այս անապահովութեան լուրջ հետեւանքները վերացնելու նպատակով է, որ կը վերյիշեցնենք ՌԱԿ Համադրուած Մամուլին անցնող դեկտեմբերի 17-ին եւ անոր շուրջ կատարած՝ հայերէն եւ անգլերէն լեզուներով յայտարարութեանց հետեւեալ վերնագրով արդարացի ու տեղին պահանջը.

***«ՌԱԿ-ի Համադրուած մամուլը կը պահանջէ՝ Հ.Հ. վարչապետը եւ իշխանութիւնները, պարտին հրապարակաւ անձեռնմխելիութեան երաշխիքներ տալ, որպէսզի Հայ Եկեղեցին իր հարցերը ի՛նք լուծէ»:***

Արդ, դժբախտաբար իշխանութիւնները գիտակցաբար կամ անգիտակցաբար բոլորովին անտեսեցին այս շատ իրաւացի պահանջը:

Ահա թէ ինչու, դժբախտաբար, բոլորովին անպարկեշտութիւն է այսօր, երբ իշխանութիւնները, կամ անոնց ենթակայ կեղծ կամ իրաւ արբանեակներ, կը ջանան այպանել Եպիսկոպոսական Ժողովի Մայր Աթոռէն դուրս գումարումը:

Միւս կողմէ կ՛արժէ նաեւ յիշել, թէ Գերագոյն Հոգեւոր Խորհուրդի կամ Եպիսկոպոսական՝ Ժողովներ Հայաստանէն դուրս գումարելու օրինական որեւէ արգելք չկայ մեր կանոնադրութեան մէջ, այլ ընդհակառակը՝ ունի նախընթացներ:

Կը մաղթենք, որ 16-էն 19-ը փետրուարին Աւստրիոյ մէջ գումարուելիք Հ.Ա. Եկեղեցւոյ Եպիսկոպոսական Ժողովը ըլլայ կառուցողական եւ արդիւնաւէտ, հակառակ Հայաստանի մէջ ներկայիս տիրող Իշխանութիւն-Եկեղեցի խիստ վատառողջ յարաբերութիւններու վիճակին, որ ինքնին աննախադէպ է մեր պատմութեան մէջ:

Պատմական այս լուրջ հանգրուանին գումարուող եկեղեցական սոյն յոյժ կարեւոր ժողովը պարտի ազգային միասնականութեան գերակայութեան մթնոլորտի գիտակից յաղթանակով հասնիլ իր աւարտին:

**ՌԱՄԿԱՎԱՐ ԱԶԱՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ՀԱՄԱԴՐՈՒԱԾ ՄԱՄՈՒԼ**
**ԱԶԳ (Հայաստան), ԱՊԱԳԱՅ (Մոնրէալ), ԱՐԵՒ (Եգիպտոս), ԶԱՐԹՕՆՔ (Լիբանան), ՆՈՐ ԱՇԽԱՐՀ (Յունաստան), ՊԱՅՔԱՐ (Պոսթոն), The Armenian Mirror Spectator (USA), ՍԱՐՏԱՐԱՊԱՏ (Արժանթին)**

***20 Յունուար 2026***

ՍՎԵՏԼԱՆԱ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ

# Շնորհավոր 35-ամյա հոբելյանդ, «Լարք»

*Կալիֆորնիա, ԱՄՆ*

Երեք օր շարունակ Գլենդելի «Լարք» երաժշտանոցի լեփ լեցուն դահլիճը հոտնկայս ծափահարում էր պատանի երաժիշտներին եւ նրանց ուսուցիչներին: Ծաղկեփնջերով ողողված էր բեմը: Ծափողջույններից տաքացել էր սրահը: Տոնական տրամադրություն էր տիրում «Լարք»-ի կամարների տակ: «Լարք»-ը տոնում էր իր գոյության երեսունհինգամյակը:



Այդ երեկո, ծափողջույնների տարափի տակ, բեմի վրա համեստորեն կանգնած մարդն ապրում էր իր կյանքի երանելի պահերից մեկը; Բացառիկ մի անձնավորություն, որի մտքի ու հոգու թռիչքով էր ուղեծիր դուրս եկել «Լարք»-ը եւ դարձել նրա կյանքի ամենափայփայած իրականացած երազանքը;

Խոսքս հայ մշակույթի մեծ նվիրյալ, մշակույթի իսկական ջատագով **Վաչե Բարումյանի** (Պարումյան) մասին է: Հուժկու տաղանդի տեր մի մարդու, որ քաջ գիտակցելով իրեն ի վերուստ տրված առաքելությունը՝ տասնամյակների տքնաջան արարումով կերտել է իր՝ երջանիկ մարդու կյանքի բազմահատոր տարեգրությունը;





Անասելի հուզում եւ հպարտություն ապրեցի ինձ հարազատ օջախի համար, որի շռայլ հյուրընկալությունը վայելում եմ ժամանակ առ ժամանակ: Համերգային բազում ծրագրեր եմ պատրաստել այստեղ, անցկացրել վարպետության դասեր ուսանողության եւ ուսուցիչների համար, ըմբոշխնել գործընկերներիս հետ շփման հաճույքը եւ հասկացել օտար ափերում հայրենի հողն իբրեւ հենարան չկորցնելու գինը:

Զարմանահրաշ այս հաստատությունը՝ արվեստի իդեալներին անդուլ ծառայելու խորհրդանիշ է: Մեծատառով կրթօջախ է այն, ուր հիմնական դասավանդվող առարկան մարդասիրությունն է: Սիրո եւ ջերմության գույներով շաղախված, ունայնություն ունայնությանց ամեն բանից հեռու մթնոլորտում են ձեւավորվում սովորողների արվեստավարժ իմաստություններն ու մարդկային նկարագիրը: Հայրենասիրական ոգին նաեւ:

Ամենուր հնչող հայերենից բացի, դա են հաստատում Հայոց պատմության եվ գրաբարի դասընթացները, մայրենիով բեմադրված ներկայացումները... Առանձին տողով կկամենայի հիշատակել «Լարք»-ի փոխտնօրեն **Թագուհի Արզումանյանի՝** հայ երաժշտությամբ ու պոեզիայով համեմված սքանչելի հանդեսները, որ իրականացվում են ուսանողների մասնակցությամբ՝ հայ ժողովրդի նշանակալից տարելիցներին ընդառաջ: Ինքնին արդեն արվեստ է եւ հայերենի բարձր դաս այդ տաղանդաշատ հայուհու յուրաքանչյուր խոսքը, որով ուղեկցվում է դպրոցի յուրաքանչյուր միջոցառում: «Լարք» երաժշտանոցում դասարաններն իսկ անվանված են հայ մեծ մտավորականների անուններով...



*Սվետլանան «Լարք»-ում*

Այստեղ մեծապես հարգված են Երաժշտությունը եւ երաժշտությամբ զբաղվող յուրաքանչյուր պատանի, մանուկ: Դաշնամուրային, լարային, փողային ու հարվածային գործիքների, նաեւ երգեցողության, կոմպոզիցիայի եւ այլ բաժիններում դասավանդող «Լարք»-ի ուսուցիչներն իրենց պատրաստվածությամբ եւ դասավանդման որակով, պատիվ կբերեին նմանատիպ ամեն մի հաստատությանը:

Այս ամենով հանդերձ, որքան էլ խոսենք «Լարք» երաժշտանոցի մասին, չպիտի մոռանանք, որ այն մեկ ճյուղն է միայն «Լարք» երաժշտական ընկերակցության, որ միավորում է իրենում կրթական, հրատարակչական, համերգային եւ այլեւայլ շատ բնագավառներ:

Այստեղ է, որ ես պիտի դարձյալ անդրադառնամ մեծարգո Վաչե Բարումյանին:

Մեր ծանոթության առաջին իսկ պահին ինձ մեկնեց նոր հրատարակված, խազերի ժամանակակից ուսումնասիրությանը նվիրված՝ **Նիկողայոս Թահմիզյանի** գիրքը: Գնահատեցի նուրբ ընտրությունը: Զգացի նաեւ ակնհայտ մտահոգությունը՝ կապված՝ մշակույթի հազվագյուտ գոհարները մոռացությունից փրկելու, եկող սերունդներին անաղարտ փոխանցելու հետ: Այս ազնիվ մղումով էին կյանքի կոչվել բազմաթիվ արժեքավոր հրատարակումներ, նվիրված հայ ժողովրդական երգին, Կոմիտասի, Չուխաջյանի եւ այլոց կյանքի եւ ստեղծագործության նվազ լուսաբանված էջերին: Ն.Թահմիզյանի, Ա. Սահակյանի եւ Ա. Փահլեւանյանի հետաքրքրական ուսումնասիրությունները նույնպես չէին վրիպել Վ. Բարումյանի ուշադրությունից:

«Լարք»-ն էր, որ բացեց Հայաստանում ճանաչված շատ եւ շատ երաժիշտների ճանապարհը դեպի ամերիկացի ունկնդիրը: «Լարք» -ն էր, որ իրականացրեց Կալիֆորնիայում պատշաճ մակարդակով մեծանուն կոմպոզիտորներ Առնո Բաբաջանյանի, Էդուարդ Միրզոյանի, Ալեքսանդր Հարությունյանի, Տիգրան Մանսուրյանի հեղինակային համերգները, ներկայացրեց Արմեն Տիգրանյանի «Անուշ» օպերան ամերիկյան հանդիսատեսին:

«Լարք»-ի հրավերով են այստեղ ելույթներ ունեցել նշանավոր դիրիժոր Օհան Դուրյանը եւ ջութակահար Սերգեյ Խաչատրյանը, երգիչներ Բարսեղ Թումանյանը, Հասմիկ Պապյանը... տողերիս հեղինակը: Հայտնի է, որ «Լարք»-ն առաջինն էր, որ տարիներ առաջ կազմակերպեց Կոմիտասին նվիրված համահայկական սիմպոզիում:



*Վաչե Բարումյանը*

«Լարք»-ն անց է կացրել հայագիտական կոնֆերանսներ, կազմակերպել տարբեր բնույթի բանախոսություններ, նաեւ հայ միջնադարյան եւ արդի երաժշտության շուրջ: «Լարք»-ի «թեթեւ» ձեռքով եւ անմիջական մասնակցությամբ է իրականություն դարձել այժմ լայն համբավ ձեռք բերած «Դիլիջան» միջազգային փառատոնը (հիմնադիր գեղ. ղեկավար **Մովսես Պողոսյան**):

Իբրեւ նոր գործերի պատվիրատու, «Լարք»-ը մշտապես խթանել է հայ ժամանակակից, հատկապես երիտասարդ կոմպոզիտորների ստեղծագործությունները: Ձգտել է նաեւ հետաքրքրել հայկական թեմաներով օտարազգի կոմպոզիտորների, ինչպես եղավ ամերիկացի կոմպոզիտոր **Իան Կրաուսի** «Ռեքվիեմ»-ի դեպքում, որի կատարումը արժանացավ բացառիկ ընդունելության: Ես հիշում եմ հիմա «Լարք»-ի նկարահանած՝ «Տիգրան Մանսուրյանի մենախոսությունը», հիշում «Լարք»-ի հրատարակած՝ հայ կոմպոզիտորների գործերի նոտաները, ձայներիզները եւ տեսաերիզները, հիշում այլեւայլ շատ բաներ եւ մտածում, որ անընդգրկելի է «Լարք»-ի գործունեությունը եւ զարմանում, թե ինչպես է հաջողվում մեկ մարդուն այս ամենը կառավարել...

«Լարք»-ի հայտարարած համերգները միշտ էլ Լոս Անջելես քաունթիի համերգային կյանքի անբաժան եւ արժանավոր մասն են կազմել: Առանձին շուքով են դրանց մեջ առանձնանում Վաչե Բարումյանի անվանն առնչվող համերգները: Ականավոր երաժիշտ, դիրիժոր, խմբավար, Վաչե Բարումյանի ղեկավարած սիմֆոնիկ եւ բազմաբնույթ այլ համերգները Պասադենայի նշանավոր «Ամբասադոր» համերգասրահում մշտապես երեւութային են որակվել Կալիֆորնիայի համերգային կյանքում: Բարումյանի ղեկավարությամբ բացառիկ հաջողությամբ են հնչել Մոցարտի Դո մինոր մեսսան եւ Բրամսի «Գերմանական ռեքվիեմ»-ը, Բրիտենի «Պատերազմական ռեքվիեմ»-ը, Մանսուրյանի «Ռեքվիեմ»-ը: Բոլորը՝ դասական երաժշտության գլուխգործոցներից:

Բարումյանի՝ իմ ունկնդրած ելույթներից հիշողությանս մեջ անջնջելի հետք են թողել Բախի՝ «Չարչարանքներ ըստ Մաթեւոսի» եւ Նարեկացու խոսքերով գրված՝ Շնիտկեի խմբերգերի փայլուն մեկնաբանությունները: Համերգները, որ կայացան Լոս Անջելեսի հանրահայտ «Զիպեր հոլ»-ում, արժանացան հատուկ գնահատության: Երկու կատարումներում էլ երգչախմբի կազմում ընդգրկված էին եւ «Լարք»-ի ուսանողները:

Նման ելույթները եւ հատկապես դրանց փորձերը, որ անց էին կացվում «Լարք»-ի պատերից ներս, հիրավի անփոխարինելի «երաժշտական համալսարաններ» էին սկսնակ երաժիշտների համար: Ականատես լինել արվեստագետի մոգական կերպարափոխման կարողությանը, նաեւ հնարավորություն ունենալ հետեւելու նրա՝ ստեղծագործության վրա աշխատելու ընթացքին, նրա պահանջկոտությանն ու դիտողություններին, համամասնակիցը լինել երաժշտության արարման... Ի՜նչ հրաշալի մտահղացում... Յուրաքանչյուրս կերազեինք նման առիթ ունենալ:

Երջանկություն է «Լարք»-ում Վաչե Բարումյանի պես ղեկավար ունենալ: Շփվել մի մարդու հետ, որի կյանքն ու գործը ուսանելի են բոլորիս համար, ըմբոշխնել նրա լույս ճառագող էությունը...

⇨5

# «Սպանիա»-ի ոդիսականը

## *Կամ ինչպես ֆրանսերենով լույս աշխարհ եկավ Կոստան Զարյանի գլուխգործոցը*

**ՍԵԴԱ ԱՆԱՆԵԱՆ**

> *«Սպանիայի պատմագրութիւնը՝ ներկան եւ անցեալը՝ թուրով եւ կրակով է շաղուած, ինչպէս մեր պատմագրութիւնը»:*
>
> *Կոստան Զարեան (1885-1969)*

Մեծանուն արձակագիր, բանաստեղծ, պատմաբան, արուեստագէտ **Կոստան Զարեանի** «Սպանիա» վիպասքը առաջին անգամ տպագրուել է Պոստոնի «Հայրենիք» ամսագրում 1935-36 թթ.: Հայաստան վերադառնալուց յետոյ (1962թ.), մեծ գրողը հրաւէր ստանալով Կենտկոմի քարտուղար **Յակով Զարոբեանից**՝ պայմանագիր է հաստատում Զարեանի ստեղծագործութիւնները հրատարակել 5 հատորով:

Ցաւօք Զարոբեանի պաշտօնանկութիւնից յետոյ չեղարկւում է այդ պայմանագիրը, հրատարակուելով միայն «Նաւը լերան վրայ» մեծարժէք վէպը 1963-ին՝ «խմբագրական» տարբերակով, աւելի ուշ՝ «Տատրագոմի հարսը», «Սգա՛ Աստուած» եւ «Վահագն» պոէմների հաւաքածուն՝ 1965-ին:

Թերեւս որպէս մեղմացուցիչ դէպք յանցանաց որոշւում է հրատարակել նաեւ հեղինակի «Սպանիա» դիցավէպը, որը պէտք է լոյս տեսնէր 1967-ի Նոյեմբերին:

Ժամանակին **Ռուբէն Զարեանի** կարգադրութեամբ որոշուեց Արուեստի ինստիտուտից **Անելկա Գրիգորեանին** նշանակել Վահրամ Փափազեանի քարտուղար-օգնական, իսկ ինձ՝ Կոստան Զարեանի:

1966-67-ին աշխատելով Վարպետի (այսպէս էին կոչում նրան, ինչպէս Մարտիրոս Սարեանին, Երուանդ Քոչարին) մօտ, առաջին պարտականութիւնս եղաւ «Հայրենիք»-ի էջերից մեքենագրել «Սպանիա»-ն:

Անշուշտ ամսագրի էջերը զերծ չէին վրիպակներից եւ տառասխալներից՝ պահանջելով առաւել ուշադրութիւն: Պիտի ասեմ, որ վարպետի երկլեզու, փափուկ գրամեքենան հրաշալի էր եւ դիւրին էր աշխատել:

Մեքենագրուած էջերը բծախնդրութեամբ կարդում էր Զարեանի ամենօրեայ այցելու (եթէ չասենք երկրպագու), անթիւ գրականութեան սիրուած դասախօս **Լեւոն Ներսիսեանը**:

Վարպետը այդ տարիներին որպէս խորհրդատու աշխատակցում էր Գրականութեան եւ Արուեստի թանգարանին, որտեղ նա մեծապէս գնահատուած եւ սիրուած էր:

Իսկ տանը եղած ժամանակ, երբ աշխատում էի, սովորութիւն ունէր երբեմն մտազբաղ, սեւեռուն հայեացքով քայլել աշխատասենեակում, բարձրաձայն որեւէ դրուագ յիշելով անցեալից: Երբ հարցրի՝ գրամեքենայի չխչխկոցը չի՞ խանգարում, պատասխանեց:

- «Ընդհակառակը՝ կը մտածեմ...»:

Այդ յիշողութիւնները նա թերեւս ոչ թէ ինձ էր պատմում, այլ մենախօսում էր, ինչպէս.

- «Տանը խօսում էինք ռուսերէն, իսկ ծառաների հետ հայերէն, Շամախու բարբառով»:

Մէկ ուրիշ անգամ.

- «Մայրս՝ ազնուաբարոյ նստած իր բազմոցին... Նա ինձ Կոստեայ էր կանչում...»:

❖❖❖

«Սպանիա»-ի մեքենագրութիւնը անշուշտ սովորական աշխատանք չէր ինձ համար, կլանուած գրքի բովանդակութեամբ՝ ուր զուգորդւում էր Իսպանիայի եւ Հայաստանի պատմութիւն-մշակոյթը, երբեմն ակամայ դադարեցնում էի գրամեքենան, լռելեայն շարունակելով ընթերցել, երբ վարպետը հարցնում էր.

- «Ի՞նչ կայ...»:

Ես բարձրաձայն կարդում էի...

- «Հայը իր հայրենիքից դուրս դադարում է հայ լինելուց, որովհետեւ նա գերազանցապէս ազգ է. իր բնութեան եւ երկրի հետ կապուած հաւաքական միաւոր: Օտար միջավայրում նա իր ազգային դիմագիծը պահում է այնքան ժամանակ, ինչքան ժամանակ որ յիշում է իր հայրենի գիւղը, իր տան մօտից անցնող վտակը, իր բակի մեծ ընկուզենին: Ինչքան ժամանակ որ նա իրեն զգում է ժամանակաւոր գաղթական, վտարանդի...»:

Հարցրի Վարպետին՝ գրե՞լ է իսպաներէն.

- «Ո՛չ, իսպաներէն կը խօսէի, բայց չեմ գրած»:

Յիշենք, որ Զարեանը գրել է՝ ռուսերէն, ֆրանսերէն, հայերէն, իտալերէն, անգլերէն:







Ի դէպ նա որոշ վերապահութիւն է ունեցել անգլերէնի հանդէպ, որի մասին յիշատակում է **Լորենս Դարելը**, իր «Պրոսպետոյի կղզին» վէպում, մեծ ակնածանքով բնութագրելով Զարեանին՝ «ալեհեր, տիրական, առասպելական»:

«Սպանիա»-ի մեքենագրումը աւարտելով 1967-ի Հոկտեմբերին, Լեւոն Ներսիսեանը յանձնեց հրատարակութեանը: Եւ սակայն...

Եղաւ նոր անակնկալ. չեղարկուեց նաեւ որոշուած հրատարակութիւնը: Մեծարժէք այդ գործը լոյս տեսաւ գրողի վախճանումից 29 տարի անց՝ 1998-ին՝ «Նայիրի» հրատարակչութեամբ, երկրորդ հրատարակութիւնը՝ 2018-ին՝ «Զանգակ» հրատարակչութեամբ, գրականագէտ **Երուանդ Տէր-Խաչատրեանի** աշխատասիրութեամբ:

Ցաւօք Զարեանը չտեսաւ «Սպանիա»-ի լոյս աշխարհ գալը, որը գրաւէր հասարակութեան կողմից ընդունուեց մեծ գոհունակութեամբ:

Ճանաչուած արուեստագէտ **Հենրիկ Իգիթեանի** նախաձեռնութեամբ ռուսերէն թարգմանուեց **Իրինա Կարումեանի** կողմից, հրատարակուելով 2003-ին, իսկ ռուսերէնից՝ թարգմանուեց նաեւ իսպաներէն՝ 2012-ին:(*)

Տարիներ ի վեր Երեւանի գրախանութներում ինքս կը գնէի «Սպանիա»-ի պատահած բոլոր օրինակները՝ նուիրելով ծանօթ-բարեկամներիս՝ ընթերցելու յորդորանքով:

Առիթ ունեմ յիշեցնելու, որ Փարիզի երկլեզու «Նոր Յառաջ» շաբաթաթերթի կողմից հայ դասականներին թարգմանաբար ֆրանսերէնով ներկայացնելը աներկբայ հայանպաստ-շնորհակալ կարեւոր աշխատանք է: Տարիներ ի վեր թերթի աշխատակից Աշոտ Փափազեանի ջանքերով թերթի էջերում հրապարակել էր Զապէլ Եսայեանի, Լեւոն Շանթի, Ռուբէն Դարբինեանի, Փանոս Թէրլեմէզեանի ստեղծագործութիւններից:

Այս նկատառումով «Սպանիա»-ի հերթական նուիրատուութիւնն եղաւ «Նոր Յառաջ»-ին՝ խնդրանքով ապագայ թարգմանութեան: Անշուշտ երկար սպասեցի անհամբեր, երբ 2023-ի Դեկտեմբերին թերթի պատասխանատու **Ժիրայր Չոլաքեանը** զանգահարեց՝ ասելով.

- «Յաջորդը կը լինի «Սպանիա»-ն»:

❖❖❖

Սպասուած թարգմանութեան առաջին հատուածը հրապարակուեց 2024-ի Յունուարի 25-ին՝ խմբագրութեան կողմից Կոստան Զարեանի մասին համառոտ նախաբանով: Պիտի ասեմ, որ թարգմանութիւնը կ՚առաջանար փորձառու իմացութեամբ, զարեանական ոգով՝ աւարտին հասնելով 2025-ի Ապրիլի 24-ին՝ թերթի 65 համարների մէջ:

Աշխատասար դժուարին գործը այլեւս կատարուած էր. յաջողութեամբ՝ գրքի հրատարակման սպասումով, որին բարեացակամ ընդառաջեց Մարսէյլից «THADDÉE» հրատարակչութեան պատասխանատու **Վարուժան Աւետիսեանը**:

Առիթով յիշենք, ինչպէս տարիներ ի վեր այդ հրատարակչութեան կողմից հետեւողական աշխատանք է տարւում ֆրանսահայութեանը եւ ֆրանսալեզու գրաւէր հասարակութեանը ներկայացնելու հայ դասականների գործերից, որ իւրօրինակ հայանպաստ առաքելութիւն կարելի է համարել:

Անհամբեր սպասումով անցեալ դեկտեմբերի վերջին «THADDÉE» հրատարակչութիւնից ստացայ շքեղ կազմով «SPANIA»-ն՝ այն համարելով իմ Նոր տարուայ լաւագոյն նուէր:

Նախաբանի հեղինակն է գրողի թոռնուհի **Սիրվարդ Զարեանը**, որտեղ ներկայացուած են Կոստան Զարեանի գործունէութեան յիշարժան դրուագներ, իսկ միւս թոռնուհին՝ **Անահիս Զարեանը**՝ վերջաբանի, հեղինակի կենսագրական մանրամասներով:

❖❖❖

Աւարտելով մեր խօսքը, «Սպանիա»-ի ֆրանսերէն հրատարակումը ընդունենք իբրեւ ուշագրաւ պատեհութիւն ֆրանսալեզու գրաւէր հասարակութեանը ծանօթանալու հայ-իսպանական պատմամշակութային իւրօրինակ աղերսներին:

Յիշենք նաեւ, որ 2025-ին լրացաւ Կոստան Զարեանի ծննդեան 140-ամեակը, որ հիշատակուեց նաեւ «SPANIA»-ի հրատարակութեամբ:

Մեր խորին շնորհակալութիւնը «THADDÉE» հրատարակչութեան պատասխանատու Վարուժան Աւետիսեանին, «Նոր Յառաջ»-ի գլխաւոր խմբագիր Ժիրայր Չոլաքեանին, թարգմանիչ Աշոտ Փափազեանին եւ խմբագրութեան աշխատակազմին՝ նորանոր յաջողութեան մաղթանքներով:

Կոստան Զարեանի ամբողջական ստեղծագործութիւնների հրատարակումն աւարտուեց 15 հատորով, Երեւանում 2025-ին:

**) Այստեղ արտառոց բան կա. փաստորեն հայերեն գրված ու հրատարակված երկը 3-րդ լեզվի է թարգմանվում 2-րդ լեզվից՝ ռուսերենից:*

*«**Ազգ**»:*

**Լոնտոն, 2026թ. հունվար**

# Շնորհավոր 35-ամյա հոբելյանդ, «Լարք»

⇨4

Հասկանում ես, որ պատահական չէ «Լարք»-ի սրահում կախված՝ Էմանուել Կանտի խոսքերը ներառող պաստառը. «Երկու բան է ինձ շարունակ զարմացրել կյանքում՝ աստղալից երկինքը մարդու գլխավերեւում եւ բարոյական օրենքը սրտի մեջ»: Սա է նաեւ Վ. Բարսումյանի դավանանքը:

Հոգիս թռչում է ինձնից արագ՝ Վաչե Բարսումյանի ստեղծագործական նորանոր առկայծումներին ընդառաջ... Դրանց համահունչ, վերջին տարիներին իրականացան Վարպետի բաղձալի երազանքներից մի քանիսը եւս: Բացվեց «Լարք»-ի համերգային գեղեցիկ դահլիճը՝ **Օննիկ** եւ **Քրիստին Քեշիշյանների** իշխանական նվիրատվությամբ, բացվեց այդչափ սպասված Հայ մշակույթի թանգարանը: Բացվեց Կալիֆորնիայի նահանգի Խորհրդարանի նախկին անդամ, այժմ՝ Լոս Անջելեսի Քաղաքային խորհրդի անդամ **Ադրին Նազարյանի** ջանքերով, շնորհիվ ամերիկյան պետական ներդրման, ինչն ինքնին «Լարք»-ի կենսունակության վկայությունն է: Առջեւում նոր գրադարանի բացումն է, ուրիշ կենսալեցուն ծրագրեր...

Շնորհակալություն բոլոր այս տարիներին «Լարք»-ին սատարող անձանց, մասնավորապես՝ **Անդրանիկ** եւ **Հայկուհի Թորոսյաններին**: Հուսանք, որ ժամանակի հետ կավելանա «Լարք»-ի բարերարների քանակը: Բոլոր դեպքերում պիտի հպարտանանք ոչ միայն մեր մշակույթով, այլեւ նրան սատարելու, պահպանելու եւ, որ կարեւոր է, գնահատելու կարողությամբ: Այդպիսին պիտի նաեւ ներկայանանք օտարին եւ իբրեւ այդպիսին լինենք հարգված:

Ամերիկացի գրող, բանաստեղծ Ռալֆ Էմերսոնը ասում էր. «Բարօրության գաղտնիքը Ուրախությունը մեր ձեռքերում պահելու կարողության մեջ է»: Սիրելի Վաչե, թվում է, քո՛ մասին է ասված:

Ի հեճուկս ամեն փորձության, արգելքի ու դժվարության, տանում ես առաջ «Լարք»-ը, երազներիդ նավը եւ շարունակելու ես տանել՝ խիզախորեն, թեւավորված՝ փառահեղ հաղթանակներով հաստատելով Ուրախությունն այս երկրի վրա...

Շնորհավոր պանծալի երեսունհինգամյակդ, «Լարք»...

# Պետություն եւ Եկեղեցի. թեժացող լարվածություն

**ՏԻՐԱՏՈՒՐ ՔՀՆ. ՍԱՐԴԱՐՅԱՆ**

Գերմանիայի Բադեն Վյուրթեմբերգի համայնքի հոգեւոր հովիվ

Հայաստանում վերջին զարգացումները ցույց են տալիս, որ այն, ինչ առաջին հայացքից կարող է ընկալվել որպես իշխանության եւ եկեղեցական վերնախավի միջեւ իշխանական պայքար, իրականում վեր է հանում հիմնարար հարցեր ի՞նչ դեր պետք է ունենա Եկեղեցին ժողովրդավարական կարգում, որտե՞ղ են ավարտվում պետության օրինական շահերը եւ որտե՞ղ է սկսվում հոգեւոր ինքնուրույնությունը, եւ ինչպե՞ս պետք է Եկեղեցին վերաբերվի իր սեփական պատմությանը, գիտակցելով իր իշխանությունը, ազդեցությունը եւ պատասխանատվությունը, բայց նաեւ դրանց սահմանները:

Հայ Առաքելական Եկեղեցին պարզապես կրոնական կազմակերպություններից մեկը չէ: Այն դարեր շարունակ կամրջել է պետականության բացակայության ժամանակները, պահպանել լեզուն, գրերը, հիշողությունն ու հավատը եւ հալածանքների ու ցեղասպանության պայմաններում ժողովրդին տվել է մի տարածք, որտեղ նրա արժանապատվությունն ու ինքնությունը անուն ունեին: Այս պատմական փորձառությունն այսօր էլ ձեւավորում է շատ հայերի ինքնագիտակցությունը, թե՛ Հայաստանում եւ թե՛ Սփյուռքում «Հայ» ասելիս հաճախ ակամայից նկատի է առնվում նաեւ Հայոց Եկեղեցին: Այդ պատճառով էլ Եկեղեցու հանդեպ պետական ամեն մի միջամտություն Հայաստանում ընկալվում է ոչ միայն որպես իրավական, այլ նաեւ որպես գոյաբանական հարց: Միաժամանակ, այս ամենը Եկեղեցուն չի ազատում ժողովրդավարական ներկայի մեջ իր տեղն ու դերը վերաիմաստավորելու պարտականությունից:

Մի կողմից մտահոգիչ է, երբ պետությունը սկսում է միջամտել եկեղեցու ներքին գործերին, անձնակազմային հարցերին, օրինակ՝ եպիսկոպոսների պաշտոնազրկմանը կամ վերանշանակմանը: Պետք է հասկանալ, որ եկեղեցական պաշտոնները քաղաքական վարչական դիրքեր չեն, այլ հոգեւոր կոչման արտահայտություն, կարգավորվող եկեղեցական կանոնական իրավունքի միջոցով: Երբ աշխարհիկ դատարաններն ու ուժային կառույցները փաստացի որոշում են եկեղեցական ճակատագրեր, վտանգվում է ոչ միայն կրոնական ազատությունը, այլեւ իրավական պետության հիմքը, խախտվում է երկրի սահմանադրությունը:

Մարդու իրավունքների տեսանկյունից խնդիրը առավել է սրվում այնտեղ, որտեղ հոգեւորականները ենթարկվում են ձերբակալությունների, ճնշումների կամ քրեական մեղադրանքների, որոնք քաղաքական գործիքավորման տպավորություն են թողնում: Դատական համակարգը, որը եկեղեցական հակամարտություններում արագորեն որոշումներ է կայացնում իշխանությանը մոտ կանգնած կողմերի օգտին, իսկ քննադատական ձայները ենթարկվում են հետապնդման կամ վարկաբեկման, վնասում է սեփական հեղինակությանը: Այն այլեւս չի ընկալվում որպես անկախ իշխանություն, այլ իշխող քաղաքական ուժի շահերի ներկայացուցիչ: Նման իրավիճակում վտանգվում է ոչ միայն կրոնական ազատությունը, այլեւ ամբողջ իրավական պետության ճարտարապետությունը:

Մյուս կողմից այս ամենը չի չեղարկում մեդալի մյուս կողմը: Եկեղեցին, որը պատմականորեն այնքան սերտորեն կապված է ազգային ինքնության, քաղաքական անցյալի եւ հասարակական կառուցվածքի հետ, որքան հայկական Եկեղեցին, ներկայացնել որպես քաղաքականությունից լիովին հեռու կառույց: Պատմության ընթացքում այն եղել է ազդեցիկ դերակատար: Հետեւաբար «քաղաքական չեզոքության» պնդումը հաճախ ավելի շատ իդեալ է, քան իրականություն: Եթե Եկեղեցին ցանկանում է խոսել մարգարեական իր առաքելությամբ, որպես Աստծո ձայն, ժողովրդի խիղճ, ապա նա պետք է պատրաստ լինի նաեւ քննադատություններ լսելուն, պահպանելով թափանցիկություն եւ ազնվորեն անդրադառնալով ներքին առկա խնդիրներին, որոնք միշտ էլ եղել են, կան ու կլինեն:

Հայաստանը այսօր կանգնած է ընտրության առաջ: Պետական միջամտությունը չի կարող արդարացվել «բարեփոխումների» անվան տակ, իսկ հոգեւոր հեղինակությունը չի կարող օգտագործվել ընդդիմությունը լռեցնելու համար: Այո՛, եկեղեցին, լինելով կենդանի մարմին, միշտ էլ ունեցել է, ունի եւ կունենա բարեփոխումների կարիք, եւ այո՛, քաղաքացիական հասարակության պարտականությունն է քննադատաբար հետեւել նաեւ եկեղեցական իշխանության կառույցներին: Սակայն ո՛չ, դա չի արդարացնում պետության կողմից Եկեղեցու «կարգապահական» վերահսկումը դատական համակարգի, ոստիկանության կամ քաղաքական արշավների միջոցով: Նույնքան անթույլատրելի է նաեւ հոգեւոր հեղինակության վրա հղում անելով՝ ներքին յուրաքանչյուր քննադատություն ներկայացնել որպես «արտաքին հարձակում»: Երկու մոտեցումներն էլ վտանգավոր են եւ տանում են դեպի խոր ճգնաժամ:

Հայաստանին անհրաժեշտ է ոչ թե Եկեղեցուն մարգինալացնող աշխարհիկացում, որը այն կվերածի լուսանցքային մի կառույցի, եւ ոչ էլ հանրային վերահսկողությունից խուսափող Եկեղեցի: Անհրաժեշտ է հասուն գործընկերություն, որտեղ պետությունը պաշտպանում է Եկեղեցու ազատությունները, իսկ Եկեղեցին այդ ազատությունն օգտագործում է ոչ թե հոգեւոր վերնախավի շահերը առաջնային դարձնելու, այլ Ավետարանին եւ մարդու արժանապատվությանը, ճշմարտությանը եւ հասարակական հաշտեցմանը ծառայելու համար՝ հեռու մնալով կուսակցական պայքարներից:

Քրիստոնեական հավատքի համաձայն, վերջին խոսքը չի պատկանում ո՛չ պետությանը, ո՛չ էլ Եկեղեցուն՝ որպես ինստիտուցիոնալ կառույցի, այլ միայն Աստծուն: Եվ հենց այս գիտակցությունն է, որ պետք է չափ ու սահման դնի երկուսի իշխանությանը: Այս լարվածության մեջ է որոշվելու, թե արդյոք Հայաստանը կարո՞ղ է լինել մի երկիր, որտեղ Եկեղեցին կարող է ազատորեն շնչել եւ իր առաքելությունն իրականացնել է ի փառս Աստծո, ի բարօրություն Մարդու եւ ի պատիվ Հայրենիքի, իսկ պետությունը՝ ամուր կանգնած օրենքի եւ ժողովրդավարության հիմքերի վրա, ազատ մնալ ամեն ինչից վախենալու եւ ամեն ինչ վերահսկելու մոլուցքից եւ չխախտել ժողովրդավարության հիմնարար սկզբունքները:

# Տեղեկություններ Իրանում տեղի ունեցած բողոքի ցույցերի ընթացքում պատճառված վնասների մասին

Ըստ թուրքական **TRT** կայքի, Թեհրանում հավատարմագրված մի շարք երկրների դեսպաններ Իրանի Իսլամական Հանրապետության արտաքին գործերի նախարարության նախաձեռնությամբ հնարավորություն են ունեցել ծանոթանալու երկրի մայրաքաղաքում վերջերս տեղի ունեցած բողոքի ցույցերի ընթացքում պատճառված նյութական վնասներին:

Վկայակոչելով իրանական լրատվամիջոցների հաղորդագրությունները՝ թուրքական կայքը հայտնում է, որ ԻԻՀ արտաքին գործերի նախարարության կողմից կազմակերպված ծրագրին մասնակցել են 25 դեսպաններ:

Օտարերկրյա դիվանագետները այցելել են բողոքի ցույցերի ժամանակ հրկիզված եւ ավերված կրոնական վայրեր, կառավարական շենքեր եւ ստացել համապատասխան տեղեկատվություն պատճառված վնասների վերաբերյալ: Իրանական լրատվամիջոցների հրապարակած տվյալների համաձայն, բողոքի ցույցերի ընթացքում ավերվել կամ հրկիզվել է 314 կառավարական շենք, 399 բանկ, 704 մասնավոր հաստատություն, 419 ցանցային խանութների մասնաճյուղ, 253 ավտոբուսային կայարան եւ 24 բենզալցակայան:

Իրանական աղբյուրների փոխանցմամբ, վնասվել կամ հրկիզվել է նաեւ 305 կառավարական եւ 749 ոստիկանական ավտոմեքենա: Բացի այդ, անկարգությունների ընթացքում վնասվել է 350 մզկիթ, 84 կրոնական հաստատություն եւ 89 կրոնագիտական դպրոց:

Ըստ **TRT** կայքի, Իրանի դատաբժշկական կազմակերպության պաշտոնական վիճակագրության հիման վրա կազմված զեկույցում նշվում է, որ ԻԻՀ նահատակների եւ վետերանների հարցերով հիմնադրամը հայտարարել է երկրում վերջերս տեղի




ունեցած բողոքի ցույցերի հետեւանքով 3117 զոհերի մասին:

Նույն զեկույցի համաձայն, զոհվածներից 2427-ը (անվտանգության մարմինների ներկայացուցիչներ եւ քաղաքացիներ) սպանվել են այսպես կոչված «զինված ահաբեկչական խմբավորումների» կողմից եւ Իրանի կառավարության կողմից ճանաչվել որպես «նահատակներ»:

Պաշտոնապես հայտարարվել է, որ մահացածների մեծ մասը քաղաքացիական անձինք են, որոնք զոհվել են զինված հարձակումների եւ ահաբեկչական գործողությունների հետեւանքով:

Հիշեցնենք, որ Իրանում բողոքի ալիքը բարձրացել է 2025 թվականի դեկտեմբերի 28-ին՝ ազգային արժույթի կտրուկ արժեզրկումից հետո եւ տարածվել երկրի մի շարք քաղաքներում:

Հունվարի 8-9-ին մայրաքաղաքում բողոքի ցույցերի սրացումից հետո երկրում արգելափակվել է ինտերնետ հասանելիությունը: Սակայն վերջին օրերին, անկարգությունների աստիճանական նվազման հետ մեկտեղ, ինտերնետի հասանելիությունը մասամբ վերականգնվել է:

**Գ. Ա.**

# Սուրբ Պյոլթենը եպիսկոպոսաց ժողովի այլընտրանքային վայր է

⇨1

Մի քանի եպիսկոպոս արդեն բանտարկված է, կառավարությունը պահանջում է կաթողիկոսի հեռացումը: Որոշ եպիսկոպոսներ վերջերս դուրս են եկել եկեղեցու ղեկավարի դեմ: Թվարկված պատճառներով Հայ առաքելական եկեղեցու Էջմիածնի մայր տաճարում հանդիպում գումարել ներկայում հնարավոր չէ: Սուրբ Պյոլթենը ծառայում է որպես ժողովի անցկացման այլընտրանքային վայր: Հայ Առաքելական Եկեղեցու բարձրագույն մարմինը կքննարկի, թե ինչպես պիտի շարունակի գործել՝ ներկա հակամարտության պայմաններում: Եպիսկոպոս Պետրոսյանը եւ եպիսկոպոս Շվարցը հաստատել են, որ եպիսկոպոսների ժողովը նախատեսված է անցկացնել բազմօրյա հանդիպմամբ, հրազեկում է Ավստրիայի կաթոլիկների kathpress լրատվականը:

«Ավստրիայի կաթոլիկ եկեղեցի» կայքը հունվարի 21-ին տեղեկացնում է, որ քրիստոնյաների միասնության համար աղոթքի շաբաթը կենտրոնացել է Հայաստանի վրա: Կիրակի օրը Սուրբ Պյոլթենի ծխական համայնքներից մեկում եկեղեցիների միասնության համար աղոթքի հատուկ արարողության ժամանակ տարբեր դավանանքների քրիստոնյաներ են ներկա գտնվել: Աղոթքի շաբաթվա նյութերը պատրաստել են Հայ Առաքելական, Հայ Կաթոլիկ եւ Ավետարանական եկեղեցիների անդամները: Արարողությանն աղոթք է հնչել Հայաստանի քրիստոնյաների եւ Լեռնային Ղարաբաղից բռնագաղթածների համար: Զալցբուրգում հունվարի 20-ին են միացել «Լույս ի լուսոյ» միասնական աղոթքին, որին հրավիրված է եղել Մյունխենից «Շողեր» կանանց երգչախումբը: Քրիստոնյաների միասնության համար աղոթքի շաբաթվա շրջանակներում միջեկեղեցական արարողություն հունվարի 21-ին գումարվել է Մյունխենի Մայր տաճարում՝ կարդինալ Ռայնհարդ Մարքսի, երկրամասի եպիսկոպոս Քրիստիան Քոփփի, Սերովբե եպիսկոպոս Իսախանյանի եւ տարբեր եկեղեցիների մի շարք ներկայացուցիչների մասնակցությամբ: Հայաստանից հատուկ այս առիթով Գերմանիա է ժամանել «Գեղարդ» երգչախումբը, որ կմասնակցի հունվարի 25-ին համաքրիստոնեական աղոթքին՝ Քյոլնի առաջնորդանիստ սուրբ Սահակ սուրբ Մեսրոպ եկեղեցում:

**ԱՆԱՀԻՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ, Գերմանիա**

ՍՈՒՐԷՆ Ա. ՍԱՐԳՍՅԱՆ

Միջազգայնագէտ, ԱՄՆ արտաքին քաղաքականության փորձագէտ

# Թրամփն իրո՞ք ճնշում էր գործադրել Բաքվի ու Երեւանի վրա

ԱՄՆ նախագահի **Դոնալդ Թրամփի** վերջերս խոստովանած արտահայտությունն այն մասին, թե ճնշում էր գործադրել առաջ տանելու համար հայ-ադրբեջանական խաղաղության գործընթացը, չնայած իր բացառիկ կարեւորությանը, հիմնականում անուշադրության մատնվեց: Չի կարելի բացառել, որ դրա գլխավոր պատճառն այն էր, որ այդպես էին ցանկացել Հայաստանի եւ Ադրբեջանի իշխանությունները: Հայաստանում շուտով ընտրություններ են նախատեսված, եւ իշխանությունները ցանկանում են ցույց տալ, որ իրենք են խաղաղության ճարտարապետները: Իսկ Ադրբեջանում բնական է, որ Ալիեւը ձեւացնի, թե ինքն է գլխավոր դերակատարը տարածաշրջանում եւ ոչ ոք, անգամ գերտերության նախագահը, չի կարող ճնշում գործադրել իր վրա:

Իրականում Մ. Նահանգների ճնշումները ուղղված էին բացառապես Ադրբեջանին, քանի որ Հայաստանն արդեն ճնշման տակ էր եւ ստիպված էր հավելյալ զիջումների գնալ: Այլ կերպ ասած, Հայաստանը չէր, որ փոխեց Ադրբեջանի դիրքորոշումը բանակցությունների միջոցով: Այդ փոփոխությունը տեղի ունեցավ Վաշինգտոնից բանեցված ճնշումների հետեւանքով: Բնականաբար, հասկանալի է, որ ոչ ամենեւին Հայաստանի շահերը պաշտպանելու մտահոգությամբ կամ բարեկամեցողության դրդումով, այլ Մ. Նահանգների շահերի տրամաբանությունը խստորեն պահպանելու նպատակով:




Շատ հնարավոր է, որ Ադրբեջանը մտադիր չէր առաջ տանել խաղաղության համաձայնագիրը, որովհետեւ նման ձեւաչափով նա պետք է հաշվի առներ Թրամփի ստորագրությունը այդ փաստաթղթի տակ: Այլ կերպ ասած, Բաքվի ձեռքերը կապված պիտի լինեին, եւ Ալիեւը պիտի չկարողանար հավելյալ տարածքներ կորզել Հայաստանից կամ ճնշում բանեցնել նրա վրա՝ հատկապես սահմանազատման եւ սահմանագծման բանակցությունների ընթացքում:

Բաքուն առանց այն էլ կարողացել է Հայաստանից ձեռք բերել այն ամենը, ինչ ցանկանում էր, սակայն շարունակում է հնչեցնել իր մաքսիմալիստական հռետորաբանությունը: Այնպես որ, չպետք է բացառել, որ առիթը ներկայանալու դեպքում Բաքուն դարձյալ հավելյալ զիջումներ կփորձի կորզել Հայաստանից:

Այն փաստը, որ Թրամփի խորհրդատու **Սթիվն Ուիտքոֆը** անցյալ մարտին Հայաստան չայցելեց եւ բավարարվեց միայն Բաքու մեկնել բանակցությունների համար, մի ավելորդ անգամ հաստատում է, որ Հայաստանը այդ գործընթացում պասիվ դերակատարություն ուներ եւ պարզապես նրա հետ քննարկելու ոչինչ չկար: Հստակ է, որ Հայաստանը լայնածավալ զիջումների արդեն գնացել է եւ շարունակում է գնալ: Եթե ինչ-որ փոփոխություններ, այնուամենայնիվ, տեղի ունենային մինչեւ անցյալ տարվա վերջը, ապա Հայաստանի իշխանությունները դրանց հետ ոչ մի առնչություն չէին կարող ունենալ:

Տեղի ունեցածը, անկասկած, զուտ աշխարհաքաղաքական գործընթաց է, որ Թրամփը նախաձեռնել է, որպեսզի Ամերիկայի շահերը առաջ տանի ինչպես Կենտրոնական Ասիայում, այնպես էլ Հարավային Կովկասում, Թուրքիայում ու Եվրոպայում: Կացության որոշակի կայունությունը նշանակում էր, որ Ադրբեջանը դադարում է Հայաստանին դիտարկել որպես թշնամի պետություն: Փաստերն այդ առնչությամբ բավական շատ են, սկսած պաշտոնական հռետորաբանությունից մինչեւ կոնկրետ գործողություններ: Այսպիսով, կարելի է ասել, որ այս զարգացումներում որոշիչ դերը պատկանում էր Ամերիկայի քաղաքականությանը՝ Թրամփի առաջնորդությամբ, եւ Հայաստանի իշխանությունները ոչ մի ներգրավվածություն չունեին գործընթացում եւ չէին էլ կարող ունենալ:

Իրականում, իրադրությունը այնպես ընթացավ, որ իր տարածաշրջանային շահերը առաջ մղելու գործում Վաշինգտոնը հաշվի էր առել նաեւ Թուրքիայի եւ Ադրբեջանի շահերը: Արդյունքում, այս երկու պետություններին արդյունավետ կերպով շնորհվեց «միջանցքի» հետ կապված լինելու գաղափարը: Կարգադրության ամբողջ փաթեթը սակայն մնում է Ամերիկայի դրոշի ներքո:

Թրամփի առաջարկած ուղու գլխավոր օգտվողները Բաքուն եւ Անկարան են, մինչդեռ Մոսկվան, Թեհրանը եւ Թբիլիսին կորցնողների խմբում են: Մոսկվայի եւ Թեհրանի պարագայում սա նշանակում է Հարավային Կովկասում իրենց ազդեցությունների զգալի նվազում, իսկ Թբիլիսիի պարագայում՝ աստիճանական հեռացում տարածաշրջանային իր ռազմավարական դերակատարությունից, որն առնչվում էր Հայաստան-Ադրբեջան հակամարտության հետեւանքով ստեղծված տրանզիտային գոտի հանդիսանալու փաստի հետ:

Ըստ էության միակ զիջումը, որ Բաքուն կատարել է Թրամփին, ճանապարհի կամ ուղու անվանումն է, որ «Զանգեզուրի միջանցք» անվան փոխարեն այսուհետ կոչվելու է «Թրամփի ուղի»: Բայց Բաքուն այդ ճանապարհը կամ ուղին օգտագործելու է առանց խոչընդոտների, ճիշտ այնպես, ինչպես նախապես հայտարարել էր:

Առանց Թրամփի վարչակազմի միջամտության հաղորդակցական միջոցները Հարավային Կովկասում բոլորովին այլ ձեւով էին ընթանալու եւ ամենայն հավանականությամբ մնալու էին Ռուսաստանի համընդհանուր վերահսկողության ներքո: Այդուհանդերձ, Մ. Նահանգների ներգրավվածությունը չի նշանակում, որ Հայաստանի անվտանգությունը երաշխավորված է: Ոչ էլ վերացնում է Թուրքիայի եւ Ադրբեջանի կողմից ենթադրվող վտանգը, լինի այն տնտեսական ոլորտի ընդարձակման, թե տարածքային զիջումների ամենատարբեր ձեւաչափերով՝ սահմանազատման եւ սահմանագծման պատրվակի շրջանակներում: Վերջում մենք տեսնում ենք, որ այդ երկու գործընթացները տեղի են ունենում բացառապես ի հաշիվ հայկական տարածքների:

Անգլ. բնագրից թարգմանեց՝
ՀԱԿՈԲ ԾՈՒԼԻԿՅԱՆԸ
(The Armenian Mirror-Spectator)

# «Մոռացեք ԱՄՆ դոլարը: Փոխարենը ուշադրություն դարձրեք ջրային եւ էներգետիկ ռեսուրսներին»

Դեկտեմբերի վերջին այս վերնագրով ուշագրավ հոդված է տպագրվել չինական «Սաութ Չայնա մորնինգ փոսթ» (South China Morning Post) անգլերեն թերթում:

Դոլարի համաշխարհային գերիշխանության դարաշրջանն ավարտվում է՝ իր տեղը զիջելով ֆիզիկական ռեսուրսների՝ էներգիայի եւ ջրի վրա հիմնված տնտեսությանը: Այս պաշարերին հասանելիությունը կդառնա պետությունների մրցունակության եւ տեխնոլոգիական ինքնիշխանության հիմնական գործոն, ասվում է հոդվածում:

Արժույթի միջազգային հիմնադրամի վերջերս հրապարակված մի ուսումնասիրությունում, ինչպես նշվում է, դիտարկվել է Միացյալ Նահանգների եւ Չինաստանի շուրջը ձեւավորված երկու զարգացող բլոկների միջեւ համաշխարհային առեւտրի վերակազմակերպման գործընթացը: Հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ համաշխարհային տնտեսական զարգացումը կարող է չվերադառնալ գլոբալացմանը, այլ փոխարենը շարժվել դեպի մակրոտարածաշրջանային կառուցվածքի ամրապնդում:



Հոդվածագրի վկայությամբ, նույն տրամաբանությամբ է ներծծված ԱՄՆ-ի ազգային անվտանգության նոր ռազմավարությունը, որտեղ հատուկ ուշադրություն է նվիրված խոշոր տարածաշրջանային միավորների (մակրոտարածաշրջանների) ձեւավորմանը եւ Չինաստանի հետ շարունակվող մրցակցությանը: Ըստ էության, ԱՄՆ-ն վերանայում է համաշխարհային առաջնորդության բուն ձեւաչափը եւ իր ուշադրությունը կենտրոնացնում ինքնաբավ մակրոտարածաշրջանի ստեղծման վրա՝ իր ղեկավարության ներքո, կարծես թե Ասիան թողնելով Չինաստանին:

Քանի որ դոլարը դադարում է միջազգային հաշվարկների միակ արժույթը լինելուց, ավելի ու ավելի է առաջանում այն հարցը, թե որ ֆինանսական գործիքը կամ ռեսուրսը կլինի առավել արդյունավետը: Հաշվի առնելով արհեստական բանականության (ԱԲ) արագ զարգացումը որպես բարձր տեխնոլոգիաների շարժիչ ուժ, պատասխանն ինքն է թելադրվում՝ էներգետիկ պաշարները:

Գիտելիքների, տեղեկատվության եւ տեխնոլոգիաների վրա հիմնված նոր տնտեսությունը, ինչպես նկատում է հոդվածի հեղինակը, չի կարող գործել առանց մատչելի ռեսուրսների եւ մարդկային կապիտալի հասանելիության: Մինչդեռ միայն սահմանափակ թվով երկրներ կարող են պարծենալ ինչպես հզոր ռեսուրսային բազա ունենալով, այնպես էլ գիտության եւ կրթության մեջ երկարաժամկետ ներդրումներով:

Չինաստանն այս հարցում առանձնանում է՝ մշակելով իր սեփական մեծ լեզվական մոդելները եւ արագացնելով արհեստական բանականության տեխնոլոգիաների ներդրումը: Այս ոլորտում այն գործնականում հետ չի մնում Միացյալ Նահանգներից: Նրանց հասնում են Ռուսաստանը եւ այլ երկրներ՝ վաղ փուլում ըմբռնելով գլոբալ զարգացման այս վճռորոշ միտումը: Իսկ Եվրոպան, դրան հակառակ, հետ է մնում ու ընդմիշտ նաեւ աստիճանաբար զրկվում է մատչելի էներգիայի հասանելիությունից, ինչը խոչընդոտ կլինի տվյալների մշակման կենտրոնների եւ մեծածավալ հաշվողական հզորությունների անխափան աշխատանքին: Դրանք անհրաժեշտ են արհեստական-բանականության զարգացման համար:

⇨8

# Իմաստաբանական բառարան

## *Զայն բազմաց...*

Ըստ Աստվածաշնչի, առաջին ստի հեղինակը **Սատանան** է՝ օձի կերպարանքով: Օձը խաբում է **Եվային**՝ ասելով, թե **Աստծո** պատվիրանին չհնազանդվելով՝ մահկանացու չի դառնա (Ծննդոց, գլուխ 3):

Սա համարվում է աշխարհի առաջին սուտը:

Դրանից հետո մարդկությունը դարձել է բազմաթիվ այլ ստերի հեղինակ, որոնցից են՝

❖ պատժից խուսափելու համար հորինված մանկական պատմություն,

❖ նյութական շահագրգռվածությունից ելնելով տրված կեղծ վկայություն,

❖ կոմպրոմատների ազդեցության տակ ստորագրված ղազագիր,

❖ նախընտրական խոստում,

❖ մանիպուլյացիա,

❖ պոզավոր սուտ,

❖ **Տերյանական** «քնքուշ սուտ»:

Կա նաեւ «հաշվենկաս սուտ» անվանումը կրող տարատեսակ, որը դրսեւորվում է այն դեպքերում, երբ վերադասիդ խոսքից ու արարքից սրտխառնոց ես զգում, բայց չես կարողանում արտահայտվել, անգամ ստիպված ես ժպտալ, երբեմն էլ՝ գովեստի խոսքեր շռայլել: Նման դեպքերում իմացիր, որ դու արդեն կորցրել ես քո արժանապատվությունը եւ դարձել «հաշվենկաս» ստի համահեղինակներից մեկը:

Այդ կարգի պատվազուրկ մարդկանց ժամանակին նկատել է **Պարույր Սեւակը** եւ փաստն արձանագրել հետեւյալ տողերում՝

*Նա, ով ելել է շալակն աշխարհի,*
*Աշխարհում երբեք թաց տեղ չի քնում,*
*Գիտի, թե ու՛մ հետ եւ ու՛ր է գնում,*
*Ու՛մ մեռելին է անարցունք լալիս,*
*Ու՛մ խոսքի վրա ստից ծիծաղում...*

Ստերի շարքում տարածված է նաեւ «սուտմեռուկ» կոչվող հնարքը, երբ կատվի (վերադասի) հետապնդումներից հալածվող մուկը (կամ մկնային նկարագրով ստորադասը) դիմում է այդ հնարամտությանը եւ ժամանակավորապես փրկում իր կյանքը:

Սակայն կյանքում լինում են պահեր, երբ բազմություն դառնալու հայտ ներկայացրած ամբոխի անդամներից մեկը համարձակվում է բացականչել՝

«Թագավորը մերկ է»:

Գ. ԱՌԱՔԵԼՅԱՆ

# Չգիտես՝ խնդա՞ս, թե՞ լաս

ԳԵՂԱՄ ՔՅՈՒՐՈՒՄՅԱՆ



Թե ինչ միջավայրում է գտնվում մերօրյա հայաստանաբնակը, դժվար է միանշանակ գնահատական տալ: Մեկն ինչ է թե կատարած առեւտրի դիմաց իրեն մեկնված կտրոնն է վերցրել ու հեռու է հռչակվել, մյուսը, մտավորական ներկայացնող թիթեռնիկ փողկապավորն առաջարկում է ճիպոտահարվածների ենթարկել... մեղա, մեղա, արքեպիսկոպոսի, որը նույնն է, թե քո կարծիքը չկիսող սթափ ծնողիդ: Երրորդ մեկը քարկոծվելու վտանգից խուսափում է զգուշանալ ու լռել, որն ինչ-որ չորրորդի կողմից մեղք է դիտարկվում, եւ այսպես շարունակ:

Իրոք, ի՞նչ է կատարվում մեզ հետ, որի իսկության մոտեցող պատասխանը չունեն ոչ 80-ամյա ամենագետները եւ ոչ էլ մինչեւ ութ լեզուների տիրապետող կատարյալները: Արդյո՞ք մեզանում ծլարձակում են մեր այն նախնիների ավանդույթները, երբ ասենք անմեղ էշը նախ դիտարկվում էր որպես մսատու կենդանի, ապա՝ միայն բանող անասուն (ՀՍՀ հանրագիտարան, 4-րդ հատոր, էջ 60): Այսօր Հայաստանում չէ, ողջ հայության մեջ, չես գտնի մեկին, ով պատրաստ է այդ կենդանու մսից պատրաստել կամ համտեսել մեր անզուգական կերակուրները, ձեր ընտրությամբ: Ճիշտ նույն ձեւով ՀՀ իսկայական պետական կառույցների պաշտոնյաների ու պատասխանատուների մեջ չենք գտնի մեկին, ով տեղյակ է ԱՄՆ-ի ու Չինաստանի տնտեսություններում... դարձյալ մեղա, մեղա, հատիկ եգիպտացորենի նշանակության մասին, առաջինում մոտ 400 մլն տոննա, երկրորդում՝ 300 մլն տոննա, միասին՝ համաշխարհային արտադրության 60 տոկոսը, երբ առավել հանրահայտ ցորենի արտադրությունը ԱՄՆ-ում 2021 թվականին կազմել է մոտ 45 մլն տոննա, Չինաստանում՝ դրա եռապատիկը: Նաեւ այս տնտեսաճի կառավարման հետեւանք է, որ ՀՀ-ում ստեղծվող արդյունքը չի հասնում 30 մլրդ դոլարի, երբ 1.2 մլն բնակչությամբ՝ մեր երբեմնի բախտակից Էստոնիայում այն վաղուց անցել է 60 մլրդ դոլարը: Թե ինչ միջոցներով, հարկ է, որ գտնեն ու իրականացնեն միլիոնավոր դրամներ ամսավճարներ ստացողները, որոնց դժվար է աշխատողներ անվանել: Եթե այս արտահայտության բուն իմաստին պատկանեին, վաղուց պարզած կլինեին, թե ինչպես է, ասենք, մեզ բարեկամ երկիր հռչակված Եգիպտոսը հարկեր - ՀՆԱ հարաբերակցությունը 6-7 տոկոս պահում, երբ ՀՀ-ում այն 23 տոկոս է, կառավարությունը ջանում է 25 տոկոս դարձնել, անշուշտ՝ հարկահավաքության մեթոդները կատարելագործելու միջոցով, որը նաեւ **քերելու** է կոչվում:

Տեղին է հիշել, որ Եգիպտոսի անկախացումից հետո արտգործնախարարը մեր հայրենակից Նուբար փաշան է եղել, որ հետագայում նաեւ վարչապետի պաշտոնն է զբաղեցրել: Այս ընթացքում հայերը Կահիրեում հիմնել են երկրի առաջին բանկը, այնպես որ ցանկության դեպքում բարեկամության պակաս չենք զգա: Սակայն դրա համար աշխատել է պետք, նվիրվել Հայաստանին. ավա՜ղ...

Ծանոթացեք, թե ինչ է ասում ՀՀ կառավարության անդամներից մեկը. եթե մենք կենսաթոշակն այսօր բարձրացնենք եւ հասցնենք պարենային զամբյուղին համապատասխան մակարդակի, դա կբերի ֆինանսական միջավայրի անկայունության: Արդյունքում նույն կենսաթոշակառուները կունենան ավելի վատ կենսամակարդակ, քան այսօր: Էլի հիշենք մեղա, մեղան, քանզի կառավարության անդամին հակադրվում է համեստ կենսաթոշակառուն. այս իրավիճակում գտնվող ՀՀ 600.000 քաղաքացիներին հավելյալ ամիսը 10.000 դրամ վճարելու պարագայում տարվա արդյունքով ստացվում է 72.000.000.000 դրամ, որից հարկվող մասը 14.000.000.000 դրամ է: Մարդիկ առեւտուր կանեն, պետությունը հարկեր կգանձի, էլ ավելացած արժեքի, էլ ակցիզային ու գույքահարկ, շահութահարկ ու եկամտահարկ, տուրքեր ու տուգանքներ: Սակայն արի ու տես, որ Հայաստանի Հանրապետության հարկատու քաղաքացիների կենսաթոշակառու եւ նպաստառու այս հատվածը հարկատու դառնալու համար չէ, պետությունը յուրօրինակ այս միջոցով նրան ազատում է հարկեր գանձելուց:

Տարօրինակ է, որ իշխանությունները կենսաթոշակառուներին չեն հիշեցնում յուրատեսակ հետվճար համարվող այն գումարների մասին, որոնք հիմնականում ավագ սերնդի մեր հայրենակիցները ստանում են Հ-1 հեռուստաընկերության «մասսովկաներին» ընդգրկվելու արդյունքում: Կիրակնօրյա «Մեծ բանավեճ»-երի յուրաքանչյուր ծափահարող կարող է ամսվա արդյունքով մինչեւ 10.000 դրամ ստանալ: Բա՜... ծափավճարները հարկ է հիշել ու հիշեցնել, ի վերջո՝ աշխատատեղեր են:

Չգիտես՝ խնդա՞ս, թե՞ լաս. եթե դուք գիտեք՝ հուշեք:

20.01.2026թ.

# «Մոռացեք ԱՄՆ դոլարը: Փոխարենը ուշադրություն դարձրեք ջրային եւ էներգետիկ ռեսուրսներին»

⇨7 Այս ամենի հաշվառումով, ըստ հրապարակման, էներգիան անկասկած կդառնա 21-րդ դարի ամենակարեւոր ռեսուրսը: Հենց այն է հիմք հանդիսանում նաեւ տրանսպորտի նոր տեսակների զարգացման ու նոր տեսակի ֆինանսական համակարգին անհրաժեշտ թվային ենթակառուցվածքների անխափան գործունեության համար:

Այս համակարգը կարող է ոչ միայն արագացնել ազգային արժույթներով միջազգային հաշվարկները, այլ նաեւ խթանել նոր թվային արժույթների ի հայտ գալը, որոնց արժեքը կապված է ոչ թե ոսկու, այլ էկոլոգիապես մաքուր էներգիայի հետ: Այս առումով վերջինս չի փոխարինում փողին, այլ ավելի շուտ՝ դառնում է առավել համընդգրկուն կատեգորիա:

Այս առումով ուսանելի է համարվում Չինաստանի փորձը. վերջին 40 տարիների ընթացքում չինացիները հասել են էլեկտրաէներգիայի արտադրության աննախադեպ աճի՝ 1985 թվականի համեմատությամբ արտադրությունն ավելացնելով 9 661.9 տերավատտժամով, այսինքն ավելի քան 2 300%- ով: Չինաստանին է ընկնում համաշխարհային աճի գրեթե կեսը: ԱՄՆ-ում, ի համեմատություն, էլեկտրաէներգիայի արտադրությունն աճել է ընդամենը 1730.1 ՏՎտժ-ով կամ 65%-ով:

Բացի այս, Արժույթի միջազգային հիմնադրամը վերջերս համաշխարհային տնտեսական զարգացման ռազմավարական գործոն եւ 21-րդ դարի հիմնական ռեսուրսներից մեկը համարել է ջրային պաշարները: Կլիմայի փոփոխությունը սրում է ջրային ռեսուրսների խնդիրը: Արտանետումների պատճառով ջրի ջերմաստիճանի բարձրացումը եւ գետերի մակարդակի անկումը արդեն իսկ զարգացած երկրներին ստիպում են դադարեցնել ջերմային եւ ատոմային էլեկտրակայանների գործունեությունը:

Ամենալուրջ դժվարությունները սպառնում են բարձրտեխնոլոգիական ոլորտներին: Ջուրն անհրաժեշտ է տվյալների մշակման կենտրոնների սառեցման համար, եւ ավելի ու ավելի խոշորածավալ համակարգչային նախագծեր հետաձգվում կամ ընդհանրապես չեղարկվում են ջրի պակասի պատճառով: Արհեստական բանականությունն ակտիվորեն զարգացնող երկրներին սա լուրջ խոչընդոտ է հետագա աճի համար: Ջրային տնտեսության համաշխարհային հանձնաժողովի գնահատականների համաձայն, մասնավորապես նվազ եկամուտ ունեցող երկրներում կառուցվածքային կորուստները կարող են հասնել ՀՆԱ-ի 10-ից 15%-ի:

Ջուրը դառնում է լիարժեք մակրոտնտեսական գործոն: Եվ սա հեռավոր ապագայի կանխատեսում չէ. այս իրականությունը ստեղծվում, ձեւավորվում է արդեն այսօր: Այստեղ ի՞նչ խնդիրներ կան եւ դրանց լուծմանն ի նպաստ ի՞նչ է արվում մեր երկրում:

Գ. Ս.

## Շնորհավորանք

Օրերս լրացավ «**Ազգի**» հմուտ, ձեռնհաս, բազմաշնորհ աշխատակիցներից **Գեղամ Մկրտչյանի** ծննդյան 75 եւ **Արծվի Բախչինյանի** 55 տարին:

Ջերմորեն շնորհավորում եւ նորանոր նվաճումներ ենք մաղթում մեր աշխատակիցներին իրենց հոբելյանների առթիվ:

«ԱԶԳ» ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԼԵ տարի
Հրատարակիչ
**«ՎԱՀԱՆ ԹԵՔԵՅԱՆ» սոցիալ-մշակութային հիմնադրամ**
Երեւան, Սայաթ-Նովա 21Ա, Տարածք 48
**e-mail:** info@azg.am
azgdaily@gmail.com
**www.azg.am**
*Գլխաւոր խմբագիր*
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ
*Հաշվապահություն (գովազդ)*
հեռ. **010 582960**
*Համակարգչային շարուածքը՝*
«Ազգ» թերթի
"AZG" Weekly
Editor-in-chief H.AVEDIKIAN
Phone: 374 010 582960

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Վահան Թեքեյան» սոցիալ-մշակութային հիմնադրամ», Երեւան, Սայաթ-Նովա 21Ա, Տարածք 48, Երեւան 0001: Պետական գրանցման վկայականի համարը՝ 286.110.1041780, տրված՝ 25.10.2018 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Ստորագրուած է տպագրութեան 22.01.2026, գինը՝ 200 դրամ, տպաքանակը՝ 800 օրինակ, տպագրւում է «Գինդ» տպարան ՍՊԸ, ք. Երեւան, Բագրատունյաց 70ա: